*Գեղագիտական, Գրական, Հասարակ., Քննադատ., Քաղաքագիտական*

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

XXIX —1918 ՅՈՒՆԻԱՐ-ՓԵՏՐՒԱՐ № 1-2

*Քսան եւ իններորդ տարի*

Тифлис, Редакція „ТАРАЗ“—Tiflis (Caucase), Direction „TARAZ“

*Խմբագրությունը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չը տպելիքը (նրա մէրից պակաս) չէ վերադարձնում։*

—

*Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ առ. ժ. 11—12*

ԲՐՆՎԱԾՔՈՒԹԻ և ՅԻՐԱՔ

—

*Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով. ՏՈՐԱԶ-ի յայտարարական տուղը առաջին երեսը 40 կ., վերջինը՝ 25 կոպ. մանրատառ (պետիտ)։ Ընտանեկան յայտարարութիւնից կրկնակի։ Շատ անգամ կրկնողները առնում են համաձայնութեամբ։*

ՏՈՐԱԶ-ի նորկայ №-ը 7 բ.

—

*Խմբագրութիւնը՝ Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, № 41. բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից) առ. 10 և կէս ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ*

—o—

Голов, пр. 41,

*Տելեֆօն* 16—90



**ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1918 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

*Մարտից մինչեւ տարւայ վերջը ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ 10 բ.*

*Ռուսաստանում: Լոյս տեսած ԱՂԲԻՒՐԻ իւրաքանչիւր №-ը 2բ.*

ՏԱՐԱԶԻՆԸ 7 բ.


## ՔԱՅԼԱԾԲ ԱՂԲԻՒՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

*Աղբիւրի առաջին №-ը լոյս տեսաւ 1883 թ. յունւարին և ունէր ընդամէնը 28 բաժանորդ, որոնց թիւը տարւայ վերջը 800-ից անցաւ և ուղարկւում էր 109 հայաբնակ վայրեր։*

*Աղբիւրի առաջին №-ում առաջին երեսում տպւեց Ղ. Աղայեանի Շնորհաւոր նոր տարի, որ առանց փոփոխութեան և նախկին ուղղագրութեամբ պահպանած է Տարազի նորկայ №-ում։*

*Աղբիւրը լոյս տեսնելուց մի ամիս առաջ՝ 1882 թ. դեկտ. 6-ին վախճանել էր Դէորգ Դ. կաթողիկոսը և անա Ղ. Աղայեանը ամենակարևորագոյնը պահում է ազգիս համար քաջ Հովւապետ ունենալը։*

*Աղբիւրի առաջին №-ում յօդուածներ ունին Ղ. Աղայեան, օր. Մ., օր. Ն. Տ. Մ., Րաֆֆի, Սրինգ, Տ. Յովհաննիսեան, օր. Ա. Բ., Արղ., Տ. Ն. և Գաբօ., (անուններդ դասաւորւած են ստացած յօդուածների կարգով։*

*Աղբիւրին հետգհետէ աւելացան մինչև տարւայ վերջը՝ Կոստ. Մելիք-Շահնազարեան, Տիգրան Վիդէն, Ա. Ն. Ալթունեան, Տիգրան Ե՞պրեմ Փանոսեան, Ալ. Ալավէրդեան, Մելիք, տ. Սօֆիա Բաբայեան, Յովհ. Յովհաննիսեան, Նիկ. Տէր-Աւետիքեան, ս. Նէմիտով, Բարկաս, Վրթ. Փափազեան, Աս. Տէր-Մովսիսեան, օր. Մխիթարեան, Կ. Մարտիրոսեանց, Գր. Խոջաղարեան։*

*Աղբիւրը ոչ մի տարի իր ծախսերը բաժանորդագրութիւնով չէ ծածկել, թէև եղել են տարիներ, երբ բաժանորդների թիւը անցել է և 2000-ից։*

*Աղբիւրումն է առաջին անգամ (Աղբիւրի պատասխ. 1883 թ, № 1) Տ, Նազարեանը գործածել «ինասիրել» բառը, որ արդէն մտել է մեր նորագոյն լեզուի մէջ։ Այդ բառը չը կայ նոյնիսկ Հայկազեան բառարանում և մինչև այդ ոչոք չէ գործածել հայերիս մէջ այդ բառը, որ կազմել է Տ. Ն. հիանալ և սթափուել բառերից (Разочароваться)*

*Աղբիւրը հայ և օտար պետրոգական-կուլտուր. բարեգործ. հաստատութիւններին տարիների ընթացքում ընծայաբերել է տասնեակ հազար հատորներ իր հրատարակութիւններից։ Ազատիկներ էն մնում բաժանորդների վճայ խոշոր գումարներ։ Սակայն կողմնակի նպաստ Աղբիւրը ոչոքից չէ ստացել և ստացած նէէրները 35 տարում (հաշած Աղբիւրի 25 ամեայ յօբելեանը) չէ կարող հասնել նոյնիսկ 3500 բ։*

*Աղբիւրի անդրանիկ №-ում յօդուածներ ունեցողներից այժմ կենդանի են միայն երեք հոգի՝ հեղինակ-խմբագիրը հրատարակչէը (երկու յօդուած, մէկը Տ. Ն. ստորագրութեամբ, միւսը Դէորգ Դ. անստորագիր և բացի այդ ներկին լուրեր Աղբիւրի պատասխանների), Սրինգը մի հանելուկ և Տիգրան Յովհաննիսեանը մի բերուած Յարգանք և յաւերժ յիշատակ կը կինք ոլացածներին։*

ԾԱՂԿԱՓԱՂ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻՑ

# ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻ ԿԱՄՕՔՆ Ա.ՅՏՈՒԾՈՅ ՅՊԻՆ ՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ՌԱՓԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵ-

# ՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒ-ՂԻԿՈՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ Ա-ՅԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ

# Ե ՋՄԻԱԾՆԻ

Աննման ցաւոք համակեալք զամբ ի ձեռն կոտրակիս յայտ առնել հարազատիցդ Մերոց որդւոց զցաւս, որ հասին Մեզ ի վերջնումս աւուրս։ Զի ընթեռնուած յօրագիրս հրէ անակնկալ լուն տնօրինութիւնք Յանձնակատար Պոլսոյ Կովկասեան շրջանի, զոր հանել ի ձեռաց Հայրապետի Ամենայն Հայոց և ի ձեռաց Հայ եկեղեցական իշխանաւորաց և Հոգաբարձութեանց եկեղեցւոց ազգային կալուածս վանորէից մերոց և եկեղեցւոց, որով և կալտիմք յիրաւանց հայոց ի ազգային ընդհանուր սեպհականութենէ մերոց և ստացութեանց, որք են յաւուրս սոյն Աթոռոյս։

Եւ զժուարին լինի Մեզ հաւատալ, եթէ յանդուգն կարգադրութիւն ինչ վեր ի վայր կենդանի հիմնական օրէնք և կարգ սերտպետութեան Մ. Եկեղեցւոյս ևայն ի ժամանակի, յորում կամք, ի ժամանակի, երբ ամենայն հաստատութիւն և հատուած ազգային ունի կազմակերպիլ ինքնորիշ օրինադրութեամբ, ազատապամ, ինքնիշխան և ի ձեռն ազգային կազմակերպութեանց իւրոց։

Նա զի իրաւունքս այսոքիք այնու ևս առաւել գնտանին զօրացեալ և անյեղլի հաստատեալ, զի ոչ տեղական ինչ են կայքդ և դրամք և ոչ մասնաւոր ինչ են սեպհականութիւնք և մատակարարութեան իրաւունք նուիրեալ ի պատկանեալ միայն Հայոց, որ ի սա Հնամեան շրջանի Կովկասու և կամ ի սահմանս հանդերձ Ռուսիոյ, այլ են նուիրական աւուրք և անվաղուց սեպհականութիւնք ամենայն Հայոց, որ ի սփիւռս աշխարհի և համարձակօրէն իսկ մարթ է հաստատել, եթէ առաւելագոյնք են ի նոսա մատակարկուածքն Հայոց քնակելոց ի Պարսս ի Հնդիս, ի գաւառս Տաճկական Հայաստանեաց և ամենայն տեղւոյ, որք ի ծագս չգնարկին։

Եւ չկարէը իսկ այդմ այլազգ ինչ լինել ցորչափ Մ. Աթոռս հանդերձ և է կետրոն բովանդակ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ, ցորչափ Գլուխ Ամենայն Եկեղեցւոց Հայոց և քնարական Գահանդապետութիւն ևս առ բովանդակ Հայ Ժողովուրդն կայ հաստեալ, առ որ յօդեալ են ամենայն անդրադարձ նորա, երբ սերոյ ևն մարմնոյ իւրեւ անդամք յայտ ի Հայ եկեղեցւոյ

Առաւել ևս ծանրագոյն կաշկանդեալ Մեր տեսչէ նուիրեալդ այս քանզի ըստ սովորական կարգաց, որ ի հին եկեղեցւոյ ոչ Մեզ, հանգ ևս ամառս սեպհականութեանց այդոցիկ ի կալուածին և ի պատարագութիւնն ժամանակաց Ս. Եկեղեցւոյ գնան. յայդ աղբիւր մշտահոսն կան կազմելոյ գոյութիւն Մեր ի առաքին ծագմանցն ցիւրացս ցգնմանեան Մեր Հոգևոր, ընդ հովանեաւ որոյ կրթեցան և կրթին մանուկն Մեր՝ ի գաւառաց Կովկասեան շրջանի, եթէ ի հեռաւոր վայրէից Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկայի, առանց խոտորութեան իւիք ինահիցդ են ժառանգաւորութիւնք այլ և այլ հաստատութեանց կրթականի և լուսաւորութեան Ազգիս, պահպանութիւն Տպարանի Ժայր Աթոռոյս, Թանգարանի և ձեռագրեայն Մատենադարանի նորին, յոր որպէս առ ձրագ լուսատու ոչ սակաւք են, որ զան յուսամնասիրութիւնս ի գիտութիւն ի ձեռս աղբերացդ են, որ պահպանի եկեղեցականութիւն Ս. Եկեղեցւոյս ի Գլխոյ Նորին ցյետին սպասաւոր, և եթէ խցեսցին աղբիւրք, ապաքէն և զամ հաստատութեան հաւատոցս ունիմք անհատիլ ի ժոտոյ։

Եւ արդ, եթէ ի ժամանակս բռնութեան և հալածանաց ազգն Հայոց ոչ ամենևին զանդադեաց ծառանալ ընդ-դէմ բռնութեան ի պաշտպանութիւն իրաւանց իւրոց, մինչ յաւուրս ազատութեան, խաղաղիչ կազմութեանս, չկարեմք ևն մի առհաս ժողովրդեան Իմոյ պնդ պնել անխրաւ որոշման և ասել ի ձայն բարձր, եթէ «Մի ոք համարձակեսցի քառասել զանարատնութիւնն սեր, որ ժառանգեցաք եւր պահպանութիւն որոյ ունիմք պնել զանանմեր իսկ»։

Ուրախ եմք ի սիրտ և ի հոգի, զի իրաւունք սեպհականութեան մերոց զրացեաց, զվրաց ասիմք և զմահմետականաց, կան և անան անշարժ, որպէս և անկն իսկ էր և իրական։

Արդ մինչ Հայն առաւել նուազ ունի ցուցանել ոպի ասպետական և զէր կրօնական, քան զրացիս իւր. մինչ ոպի նորա ունի խոնարհել ընդ լծով անիրաւացի որոշման։ Քաւ. զիտեմք և հաւատամք, եթէ գոյի յազգի Իմում նոյն ոպի առաքինի ասպետութեան և զրացման առ սրբութիւն հանրական սեպհականութեան իւրոց։

Մաղթեմք արտաքին կալ և զօրութիւն աւետեցուցեալդ յայս գործ մեծ և աղօթիւք հասանել ի գլուխ պաշտպանութեան իրաւանց եկելոց առ Մեզ ի նախնեաց մերոց և տալ սերնդեան Մերոյ, որ գինի Մեր։

Ողջ լերուք զօրացեալ ի Գլխոյն հաւատոյ Մերոյ և օրհնեալք Աչեզ Ամէն



Ի 10-ն Յունուար 1918 ամի Ից Տուարիս ԻԾԿԵ Ի Հայրապետութեան Մերոյ Ի ամն ՅԱրարատեան Մ. Աթոռ Ս Էջմիածնին Ի Վաղարշապատ Թ. 44

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

REDACTEUR EN GHEF ET DIRECTEUR

TICRAN NAZARIAN

ԹԻՓԼԻՍ № 1 - 2 1918 ՅՈՒՆԻԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ XXIX TIFLIS

# ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

## LXXI

# ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԱՄԵԱԿ ԱՂԲԻՒՐԻ

Հրատ. ԱՂԲԻՒՐԻ 35 տարին և նրա 36-րդ տարւայ յունւարի №-ը նոյն ամսին էլ ուղարկւել են բաժանորդագրողներին, որոնց թիւը ՏԱՐԱԶ ստացողների հետ միասին մինչև այսօր, փետրւարի 15-ը, դեռ չէ հասել 150-ի խակ։

Այս մասին առայժմ նոր ասելիք չունենալով, մենք աւելորդ չենք համարում քաղաքավարի արտայայտել սրանից հինգ տարի առաջ մեր հրատարակած «ՀՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ» հաշւետւութիւնից հետևեալը՝

### ՀՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ

Հրատար. № 114
Աղբ.-Տարազի

*Ոչ լայ, ոչ խնդալ*
*Այլ հասկանալ։*
ՍՊԻՆՈԶԱ.

Երեսունհինգ տարի սրանից առաջ նետւելով գրական-հասարակականհրատարակչական հայ ասպարէզ, առանց աչ ու ձախ նայելու, գիտակցելով մեր խաչը, սիրայօժար և անդառնալի ուխտեցինք մինչև մահ կրել այդ անվնատ։

Մենք երբէք յաւակնութիւն չունեցանք սպասել մեր կատարած գործին տրիատւր՝ ոչ փառք, ոչ հարստութիւն, ոչ յարգանք և ոչ իսկ մարդավայել կենցաղ։

Տասնեակ տարիներով հայը մեր գործը տեսնում էր և ծաղր ու ծանակ անում մեզ, չը քաշւելով նոյնիսկ ամրացնելուց, զրպարտելուց...

Մենք լուռ ու մունջ էինք, կրկնում ենք, գիտակցելով մեր խաչը

1883 – XXXV – 1918

—

Այժմ մենք անցել ենք շատ երկար ճանապարհ, դառն ու արիւն-արտասուք շատ տարիներ։

Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչից յետոյ կովկասեան փոխարքայութիւնը վերացւելով, ակսւից Դոնդուկով-Կորսակովիան, ապա Գոլիցինեան էպոխը։ Այդ ժամանակները թէ ռուսահայը և թէ տաճկահայը մի քաոսի մէջ էին, որովհետև հայկական հարցը հէնց խանձարուրի մէջ Քիւճնաֆիլդն ու Բիսմարկը խեղդամահ էին արել։ Իսկ մեր ռուսական քաղաքականութիւնը շնորհիւ մեր դիպլոմատիայի անհեռատեսութեան (թող ներւի մեզ ասել՝ տգիտութեան), ռուսական յաղթող դրօշակը գցել էր երկրուն վիճակի մէջ։

Մինչդեռ մենք Ռուսահայաստանի մեծութեան, փառքին յատւոդով, ռուսական այն ժամանակւայ կառավարութիւնը, Ի գէմս իր գրաքննական ատեանի, համարեա քար ու երկաթ էր մաղում և մեր գլխին։ Մենք մեր թերթերի մէջ ազգային ինքնուրոյն գաղտօրնների բարգաւաճման համար էինք պրօպագանդ անում։ Հայ լեզուն, հայ գիրն ու գրականութիւնը, թատրոնն ու կուլտուրական հաստատութիւնները անվիճելի ազատ էինք կամենում տեսնել ռասիկանական ոտնձգութիւններից։ Թերթել պէտք է Թիֆլիսի գրաքննական ատեանի և Պետերբուրգում մամուլի գլխաւոր վարչութեան արխիւները, որպէսզի ռեվիզիոն լինեն տասնեակ տարիներ մեր քաշած դաժան, յաժառ պայքարն ու վիշտը։

Ազգայնական գաղափարը ճնշելով, այն ժամանակւայ կառավարութիւնը հէնց անպիտակցաբար ինքն էր մղում ժողովրդին դէպի աւելի վտանգաւոր տենչանքների ասպարէզը։

Եւ սրա հետևանքն այն, որ հայութիւնը կրկս դարձրեց իր մայրենի լեզւից, մայրենի գրականութիւնից, իր 1600-ամեայ հարազատ եկեղեցուց և թերևս դէպի մի վարդապետութիւն, որին դաւանելը հասսար է հայութեան ընկճինչ լինելուն։

—

Մենք խոնարհում էինք Գլադստոնի բարեացական սկզբունքների առաջ, բայց և զգո շացնում հայերին, ասելով, որ Անգլիան զեկավարողը Սալիսբըրին է, որը չը քաշւեց Գլադստոնի նման առաքինի պետական մարդուն ասպարէզից հեռացնել։ Մենք ասում էինք, այո, Բօզրիէրին ազատամիտ է, գլադստոնեան ոչեժիմին կողմնակից, բայց այնուամենայնիւ նա Ռօջիլդի փեսան է..

Բէյտերը, Լինչը նաւային, առևտրական մեծ գործեր ունեն, շահագրգռած են Հայաստանով, սակայն մի մոռացէք, որ այժմ Անգլիան ուժեղ է և զոռոզ ըստ ևիևոյթին։ Կայ մի այլ հրիտասարդ պետութիւն, որ օր-օրի վրայ, ինչպէս հէքիաթներում են պատմւում, աճում է և մեծանում։ Այդ պետութիւնը Գերմանիան է, Անգլիայի միակ հզօր և լուրջ ախոյեանը։ Ուստի պէտք է գիտակցել դիմացինի կարողութիւնը։

—

Հայրենասէր փրանսուհի տ. Ադան Ժուլիէտը արտասւեց, ողբաց Հայաստանում արեան գետեր հոսելու օրերը, սակայն և աւելացրեւ. *Ջրանի որ իմ գերի*

ԱՂԲԻՒՐԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՑ ՄԻՆՉԵՒ 1908 Թ. ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄԵՐ ԲԱՆԻՒՈՐՆԵՐԸ.

*Էլզաս-Լոթէնը».*

*Հեռու կը տանէ մեզ այս դարմանը քամուն տալը։*

*Մեր հասկացածն է՝ հայը պէտք է բարոյապէս և մտաւորապէս հզօրանայ։ Հայի փրկութիւնը մենք գտնում ենք նրա բարոյական վերածնութեան մէջ, և այդ էլ հիմք ունենալով մեզ, ղեկավարում էինք մեր նաւը, որ իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում էր ապառաժների, սառցաժայռերի։*

*Հայաստանեայց եկեղեցուն վերաբերեալ մեր սկզբունքն է, որ նա պիտի մնայ, ինչպէս կայ։ Եւ ժամանակակից քրիստոնէութեան հետ, ասել էինք, ոչ մի կապ չունի հայոց ազգային եկեղեցին։*

*Կողմնակից լինելով կեանքին, մենք ասել ենք՝ մի կործանէք հայոց եկեղեցին, ս. Էջմիածինը, Հայաստանի 1600 ամեայ Մայր Աթոռն ու Գահակալը, որպէսզի յետոյ կոկորդիլոսի արտասուքներ չը թափէք և բեկորները տանէք մուզէյներում, գրադարաններում բազմեցնէք, ապա պարծենաք ձեր աւերակներով, ձեր դիակներով ու գերեզմաններով։*

*Մեզ զէնք ենք ընդունել գեղեցիկն ու բարին, արեւստն ու գիտութիւնը և նրանցով ջանացել յղկել, պայծառացնել, լուսաւորել հայի խաւար միտքն ու սիրտը։*

*Բայց ահա հասաւ և Աղբիւրի քառնհինգամեակը ու ճարահատ հայը, չը կարողանալով թաղել Աղբիւրը և կոկորդիլոսի արտասուք թափել, սարքեց խնճոյք։ Ու տօնեց Աղբիւրի քառնհինգամեակը շատ փառաւոր։*

*Ծոբելեանից առաջ մենք ասացինք՝ «Ինչն էք տօնում։ Տարածեցէք Աղբիւրն ու Տարազը հայութեան բոլոր խաւերում, ահա և մխիթարած կը լինէք մեզ»։*

*Մեզ ականջ չը դրին և շատ ամիսներ լրագիրները թմբկահարեցին, դրւատեցին մեզ և մեր գործերը ու արքունական թատրոնում կայացաւ յոբելեանական հանդէս։*

*Սև բանակը խրոխտաց. տարածեցին, որ այդ երեկոյ ուժմբ են նետելու հանդիսականների և հանդէսը սերբողների վրայ։ Եւ շատերը սարսափահար վախեցան այդ երեկոյ ներկայ լինել հանդէսին...*

*Ամբողջ եւրոպական մամուլը ի դէմս իր դաշնակցութիւնների շաղակապի կենսարռնական կոմիտէի նախագահի և բացի այդ, գատ-գատ իւրաքանչիւր դաշնակցութեան ներկայացուցի ջիբմ և սրտագին ողջունեցին մեզ։ Մի պատիւ, որին մինչև այսօր ոչ մի հայ թերթ չի արժանացել։*

*Սրա հետևեալ տարին Անգլիան համաշխարհային ժամուկի աւտօրիտէտ գործիչներին հրաւիրեց կօնֆերանսի Լոնդոն և ամբողջ Ռուսաստանից այդ կօնֆերանսին բացառապէս մենք միայն հրաւիրուեցինք։*

*Գերմանիան նոյն իսկ իր ամենատարածուած պաշտօնական թերթում մեզ անուանեց զերմանական մտքի, գրականութեան եւ արուեստի ժրաջան ներկայացուցիչ։* (Wossische Zeitung 1913 թ. № 421.)

*Պօրտուգալիան իր պետական բոլոր կաճառների և համալսարանների միացեալ ներկայացուցիչ մեզ ընտրեց մեծ Ծօլստոյին յարգանք մատուցանելու, որ և կատար ածեցինք։*

*Ֆրանսիան է, որ մինչև օրս էլ մեզ տալիս է լրագրողի կարաը, սկսած 1889 թուականից։*

*Փոքրիկ Հոլանդիան, ամենքը իմացան, թէ ինչպէս հայ-թուրքական ընդհարումներին մեզ հրաւիրում էր, որ մեր պատուէ ժողը վերադառնանք և գնանք այնտեղ, ուր գրկաբաց մեզ սպասում են։ Յայտնի է և մեր պատասխանը։ Այդ բոլորը տպուած է վաղուց։*

*Այնուհետև, երբ մի խումբ մարդիկ ինքնամոռացութիւնն հասած, պատրաստում էին ոռւմբ գցել Աղբիւրի և նրա բարեկամների վրայ, այդ փոքրիկ Հոլանդիայից մեզ քառնհինգհազար ֆրանկ էին ընծայ ուղարկել, որ մերժեցինք ընդունել և իրրև ապացոյց, որ հայը ինքը պահպանում է իր թերթերը, դպրոցական աշակերտների համար ութ տարի շարունակ Աղբիւրը իր ճանապարհածախսով 3 ր. փոխարէն մեկ ր. դարձրինք մինչև 1915 թ. պատերազմը։*

*Սակայն հայը մի րուբլիով անգամ գլացաւ Աղբիւր ստանալ, չը նայած որ 60 կ. վճարւում էր մեայն պօստին և բանդերօլի։*

*Արտաքին դրկանքները, ճնշումները անկարող եղան կործանել Աղբիւրն ու Տարազը, բայց վերջին տարեբերձանների հովերը հայ ժողովրդին սառցրին իր մայրենի գրականութիւնից, իր ազգային հաստատութիւններից։*

ՀԷՆԶԵԼ ԵՒ ԴՐԷՏԷԼ
*Հեքիաթ-Օպերա, տպագրուած Աղբիւրում։*

*Աղբիւրն ու Տարազը չունին ոչ կողմնակի նպատակ և ոչ այս կամ այն հոսանքի արտայայտութիւն են։ Աղբիւրն ու Տարազը հայկական վերածնութեան հիմքը համարում են ճշմարիտ դաստիարակութիւնը, ուսումը, գիտութիւնը, արուեստը։ Սակայն հայ դպրոցն ինքը իշում վիճակի մէջ է և հայ ընտանիքը բռնել է թիւր ճանապարհ։ Հայ ընտանիքը իր ամբողջ սերունդի դաստիարակութեան գործը թողել է դպրոցին, իսկ դպրոցն էլ, որ հետևում է մի կամ այն հոսանքի կողմնակից լինելու, ինչպէս է այս կամ այն հոսանքի կողմնակից լինելու և արա հետևանքը՝ յետ է մղւում դպրոցից և անմեղ Աղբիւրն։*

*Ինչքա՜ն նման է՝ 35 տարի առաջ նախրեալ հայ գրական-հրատարակչական գործին, և այդ գործը տանելու համար հայը չը տայ գէթ այնքան բաժանորդագին, որ կարելի լինի թերթերի գէթ ամենաէական պէտքերը հոգալ։*

*Մեր աղերսը հային, որ պահէ պահպանէ և շատ ընդարձակ տարածէ հայութեան բոլոր խաւերում Աղբիւրն ու Տարազը։*

*Կրկնում ենք, մենք ոչ մի յաւակնութիւն չունենք հային սպասելու ոչ յարգանք, ոչ փառք և ոչ իսկ մարդավայել կենցաղ։ Մենք կեանքի բոլոր ֆազիսները՝ նրա վայելքն ու կսկիծը, ուրախութիւնն ու վիշտը լիուլի այնքան ենք ճաշակել, որ ոչ մի հայ գրական-հասարակական գործիչ նոյն իսկ չէ ըերազել։*

ՆՄՈՒՇ ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ



ՆՄՈՒՇ ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

*Մեր միակ բաղձանքն է, որ բարգաւաճ ու կենսաբար կեանքով հայութեան համար յաւերժ ապրին Աղբիւրն ու Տարազը իրանց իսկ արտադրած աշխատանքի վաստակով։*

*Արհեստական ջօնդերը, յրլեհաններն ու նման ձեռնարկութիւնները չեն, որ պիտի պահպանեն ազգային գործօնները, այլ հայի գիտակցութիւնը, հայի նամոտքը։*

**Տ. Շ.**



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

# ԵՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Արուսյակ վերջին, մեզ դիշերին
Մի ձայն լսուեց երկնքից,
Թէ մի հրեղէն մանուկ ծնուեց
Ժամանակի երկունքից։

Նա գալիս է, ով մանուկներ,
Հազար ու մկ բարիքով,
Թէև մանուկ, բայց խելօք է,
Ինչպէս մեծ մարդ տարիքով։

Ձեղի համար նա բերում է
Տեսակ տեսակ խաղալիք,
Անուշ անուշ մրգեղէններ,
Սիրուն սիրուն հագնելիք։

Ձեզնից ոչինչ չի խնայիլ,
Ինչ որ խնդրէք՝ նա կը տայ,
Բայց մեծերիս....ուրիշ բան է,
Չի էլ նայիլ մեղ վրայ։

Միշնորդ եղէք, ով մանուկներ
Դուք ձեր արդար բերանով,
Որ մեծերիս էլ ընդունէ
Ձեղ չափ պատուով ու սիրով։

Ձեր սուրբ բերնով աղաչեցէք
Այս նորածին մանուկին,
Որ այս տարի նա շնորհի
Քաղ Հովուապետ մեր Ազգին։

Եթէ նա ձեր արդար բերնով
Մեր խնդիրքը կատարի,
Այն ժամանակ մենք էլ կասենք
Շնորհաւոր նոր տարի։

ԱՂԲԻՒՐ I ՏԱՐԻ, 1883 № 1 Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ

# ՏԵՐԵՒՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

(Charles Millevoye)

Սեր անտառների շքեղ պզեսները
Դեռևին էր սկսել հոգոտ աշունը.
Անզարդ անտառը էլ զարդ՝նիք չ՝ունէր,
Պճեռ-սոխակը կարել էր ձայնը։

Խուլ քայլերով մի հիւանդ պառաւեակ,
Իբ ալշալոյսին, կիսամեռ տրտում,
Դարձեալ մի անգամ շրջում էր մեռնակ--
Մանուկ օրերից սիրած անտառում։



ԵՂԻՇԷ ՄԱՂԱԹԵԱՆ

«Անտառ, մեռնում եմ, ըէհ, ծնաս բարև.
Ինչ սուգը իմ մահուան է նշան
Եւ քեզնից ամեն մի ընկնող տերև,
Կարծես գուշակում է իմ մօտիկ վախճան։
Զարագոյժ հարցուկ Եպիդաւրոսի 1)
Դու ինձ ասացիր. «Տերևներն աշնան
« Ինչ աչքիդ առաջ պես պիտի ջեղնին.
« Բայց իմացիր, այս վերջին է անգամ.
« Ինչ շուրջ՝ պառակ է անթառամ նոճին 2).
« Աւելի գունատ քան գունատ աշուն,
« Դու մօտենում ես մահը գերեզմանին։
« Դիտի թառամի քո մարդութիւնն
« Նախ քան տերտը դաշտավայրել ի,
« Յառաջ քան ուրը այդ լուրևներին»;

Եւ մեռնում եմ ես. իւրեանց պաղ շնչով
Հալում մաշում են ինձ ոյժգին հոդմեր.
Եւ տեսնում եմ ես, ինչպէս իմ գարուն
Հալում է որպէս մի նուազ ստուեր։
Դէհ ընկիր, ընկիր, տերև սղակեաց,
Ծածկիր հայացքից այս տխուր ուղին.
Ծածկիր մօրիցս իմ յուսահատուած
Այն տեղը, ուր ես էգուց պիտի լինեմ։
Իսկ եթէ անխօս դէպ՝ այս ծառուղին,
Երբ աղմկալի ցերեկը ծածկուի,
Գայ վերստ լալու իմ խեղճ սիրուհին,
Ջո մեղմ սօսափիւն թող որ գարթեցնի
Առ ժամ սփոփած ստուերս ողբալի։»
Ասաց. հեռացաւ, անդարձ հեռացաւ.
Եւ հազիւ ընկաւ տերևը վերջին
Նորա օրհասի նշանը տուաւ։
Կաղնի ծառի տակ նորան թաղեցին։

Բայց իւր սիրելին այլ չ՝եկաւ նորան.
Չ՝եկաւ տեսնելու մխայնակ շիրիմ,
Եւ դաշտում միայն հովուի ոտնաձայն
Անդորրութիւնը խանգարեց, խորին
Անդորրութիւնը գերեզմանական։

Ե. Մ.

(Նիւիշէ Մաղաթեան)
Ազբիւր I տարի. Սեպտ. № 9



1) Եսկուլապոսը՝ բժշկականութեան աստուածը մի տաճար ունէր Յունաստանի Եպիդաւրոս քաղաքում՝ Սրգուլիդում, Բասաստեղծը ասելով՝ Զարադոյժ հարցուկ Եպիդաւրոսի». կամենում է հասկացնել՝ «Զարագոյժ նախագուշակութիւն բժիշկների»։

2) Նոճի—Cypres, кипарис, միշտադալար ծառ։

Սօվասիլնա
Իշխանուհի Սօֆիա
Արղութեան-Ներկայնաբազուկ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

Ալրախ ձմեռ, շուտ արի
Փաթիլ ձիւնը հետդ բեր,—
Որ ընկերանայով դուրս գանք
Ջնի կոլոլակ խաղանք։

Դէ խիստ ձմեռ, շուտ արի,
Սիրուն գարուն, նորոգուի,—
Որ ընկերանայով դուրս գանք
Կանաչ դաշտումը խաղանք։

Ցնձագին Փետրուարին,
Աղցան, մանիշակ Մարտին,
Եւ ծնեփակ Ապրիլին,
Գաղնիք և զուարճանանք։

Այգիքը շինիր նախշուն,
Կարմիր վարդով զարդարուն,—
Որ ընկերանայով դուրս գանք
Գաղնիք և ուրախանանք։

Գարուն, տափերին ծոռ տուր,
Ալրս, արտերին բոյ տուր,—
Որ առին-առին անի,
Տնանողի խելքը տանի։

Սիրուն գարուն, ծաղ քու տեղ
Ամառ բերի ցորնի ծեղ,
Հազար խաղողներ դուրս գան,
Ռաշպարներ ուրախանան։

Ամառ շուտով բեր շոգեր,
Հասցուր ամեն մրգեր,—
Որ ընկերանայով դուրս գանք
Ուտենք և ուրախանանք։

Ցունխին կանաչ վարունգ,
Ցուլիսին զիլ ձմերուկ,
Օգոստոսին դեղձ քաղենք
Ուտենք և ուրախանանք։

Աշուն, ճկ մեզ հովացրու,
Այրող արևին փախցրու,—
Որ ընկերանայով դուրս գանք

## ՅԱՂԹԱՆԴ

Ա՛յնոր առուն ինձ ծառիկ,
Շիւեր աբա գեղեցիկ,
Արմատ ձգէ դու հողուս,
Որ չը շարժէ քեզ մըրիկ։
Ես ամեն օր քեզ համար
Ջուր կը բերեմ սափորով
Եւ քո տակը կը փորեմ,
Որ զօրանաս դու շուտով։
Ծաղիկ, տերև ու պտուղ
Քոց գարդարեն քո ճիւղեր,
Նորանց վերայ քոց հրգեն
Անուշ ձայնով սոխակներ։
Մի վախենար չար որդից,
Որով լի է ողջ աշխարհ,
Դրանց համար մեր երկիր
Վաղուց դառել է օտար...
Հասուցրու քո բունը,
Այն ժամանակ փոքրիկ
Քոց ստնչէ, որոտայ,
Չի վնասիլ քեզ, ծաղիկ...

ՍՐԻՆԳ

Աբբիւր 1 տարի. Մարտ, № 3

Ս Ր Ի Ն Գ
Արշակ Միհրաբեան

Հովում մանդոնք, դովանանք
Լաւ խաղող Սեպտեմբերին,
Լաւ գինին Հոկտեմբերին,—
Որ ընկերանայով դուրս գանք
Ուտենք, խմենք և խաղանք։
Անցաւ աշուն շաղախառն,
Հասաւ օրեր ձիւնախառն,
Սարեր ծածկեց սպիտակ ձիւն
Ամենայն մարդ մտաւ տուն։
Էհ, ինչ վատ է ձմեռ օր
Տանը նստել սգաւոր,—
Ուսումնարան եկ գնանք,
Կարդանք, որ լաւ մարդ դառնանք։

Ս ԿԱՄԱԼԵԱՆՑ

Ազբիւր 1 տարի. դեկտ. № 12

Բանաստեղծուհի
Շուշանիկ Կուրղինեան

## ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Առաջին գիրքը, որ դպրոցում ինձ տուին ընթերցանութեան համար այդ «Ազբիւր» մանկական ամսագիրն էր։

Ցիշում եմ, պատուաւոր ընկերներս մանկական աշխարհից, սիրած կենդանիների կեանքից և նամանաւանդ նկարները. մեծ հրճուանք պատճառեցին ինձ հէնց սկզբից։

Երկար, շատ երկար ես տարուում էի իմ կարդացածով և յափշտակուած ընկնում մանկական ջինջ, յստակ երազանքի մէջ...

Ինձ թւում էր թէ՝ մի ինչոր համայիչ մտերմութեան, հարազատութեան ջերմ զգացմունք էր ճաճում իմ կրծքի տակ դէպի «Ազբիւրը»։ աղբիւրը մանկական պահանջողքննող ծարաւի։

Տարիների ընթացքում յաջորդաբար փոխեցին իմ ընթերցանութեան գրքերը. սակայն անչինջ մնաց անձնական փորձերիս ստացած այն անհերքելի ճշմարտութիւնը որ՝

Մանկական մի ընտիր գիրքն աւելի է տալիս, քան մօր խանդոտ կաթը։

Մանկական մի արժանի օրգանն աւելի մեծ գործ է կատարում հաւատար, առանց խորութեան։ կապակցական արտօնեալ պաշտպան նների փչացնող դաստիարակութեան քան մօր միահեծ հսկողութիւնն և միակողմանի սէրը։

Փառք և պատիւ նրան, ով բանուոր մշակ է մանկական անվատաք աշխարհում...

Շուշանիկ Կուրղինեան

*Սարգիս Քամալեանց*

# ԳՐԱԶԸ ՏԱՐԱՅ

**(Յիշողութիւններ)**

*Տասներեք տարեկան էի, երբ լոյս տեսաւ «Աղբիւրը»։*

*Մենք այդ ժամանակ գիմնազիայի ստորին դասարանի աշակերտներ էինք և ընդամէնը մի ամիս էր, ինչ կազմակերպել էինք «ինքնազարգացման» գործը։*

*Շաբաթ օրերը, հաշիւ չեմ ժամ 3 և կէսից կը ժողովէինք քաղաքի վերին այգիներից մէջ 8—10 հոգով և գրքեր կը կարդայինք—«կը զարգանայինք»։*

*Առաջին գիրքը, որ մեզ վրայ թողեց իսկ տպաւորութիւն, դա «Աղբիւրի մէջ տպուող «Հայկայ Մրջունի» պատմութիւնն էր։ Զըզիտեմ ինչու և որտեղից մեր մէջ այն համոզմունքն էր հիմնաւորւել, որ դա այլաբանական մի գրւածք է, ուստի և մենք ամեն ինչ բացատրում էինք այլաբանօրէն և ամենայն վախճանում, որ պօլիցիան կարող է մեզ բռնել և որպէս յեղափոխականների աքսորել։ Եւ որպէսզի դրանից խուսափինք, մենք «Հայկայ Մրջիւնը» կարդում էինք խոր այգիներում, ձորերում, կերեզմանոցներում և յետոյ միևիկ մեկիկ անցում էինք մեր տները։ Նոյնպիսի հետաքրքրութեամբ կարդում էինք «Աղբիւրի» այն համարները, ուր տպւում էին «Փայտաշէն խրճիթից մինչև սպիտակ տունը» կեղեքիչ պատմւածքը։*

*Այդ օրւանից «Աղբիւրը» դարձաւ մեր սիրելին, բայց իմ ողջ անբաղդութիւնը նրանումն էր, որ քաղաքում «Աղբիւր» ստանում էին միայն հինգ-վեց հոգի, ուստի և դժւարութեամբ էր ձեռք ընկնում։*

*«Աղբիւր» ստանալը դարձաւ ինձ համար չերմ կանկութիւն։ Ինքս միջոցներ չունէի, բայց վճռել էի, ինչպէս և լինի, առաջիկայ տարւանից բաժանորդ գրւել։ Մտածում էի 3 ր. մասին. հայրս դժւարանում էր տալ և այն՝ մի անգամից։*

*Շուտով մի դէպք օգնեց ինձ։*

*Մեզ մօտ հիւր եկաւ մեր ազգականներից մէկը՝ Դանիէլ բիձէն։ Զեմ յիշում որտեղից որտեղ ես ու նա աշխարհագրական վէճի բռնւեցինք. ես պնդում էի, թէ Գէնուան Իտալիայումն է, նա՝ Ֆրանսիայում։ Գրազ եկանք։*

*—Ո՞նչի վրայ,—հարցրեց ինձ Դանիէլ բիձէն։*

*Իսկոյն միտքս ընկաւ «Աղբիւրը»*

*—Եթէ դուրս եկաւ, որ Գէնուան Իտալիայումն է, դու ինձ համար բերել կը տաս «Աղբիւրի» առաջիկայ տարին. իսկ եթէ քո ասածը եղաւ, ես խոստանում եմ ամեն անգամ, երբ ուզենաս երգեմ։*

*Շիրեմ Ծատուրեան*

*Միակ բաժանորդը, որ հնընդհատ 35 տարի Թիֆլիսում ստացել է* **ԱՂԲԻՒՐ** *և ապա սրա հետ միևչև օրս 28 տարի շարունակ ոտանում է և* **ՏԱՐԱԶ**

Դանիէլ բիձէն համաձայնւեց։

*Ես ուրախ-ուրախ հանեցի աշխարհագրութեան վիրքս և ցոյց տւեցի Գէնուայի Իտալիայում լինելը։*

*Գրազը տարել էի. ուրախութեանս չափ չը կար։*

*Երկու օրից Դանիէլ բիձէն տւեց ինձ չորս րուբլին և ես իսկոյն բաժանորդ գրւեցի «Աղբիւրին»։*

*Այդ տարւայ բոլոր համարները ժողովեցի, կազմել տւի և մինչև օրս իմ գրադարանում կայ «Աղբիւրի» այդ տարին, բայց ինչպէս քրքրւած, կեղտոտւած, հալից ընկած..*

*Մի տարի մեր «զարգացողական խումբը» օգտւում էր իմ այդ հարստութիւնից։*

*Ես հպարտ էի դրանով։*

**Ա. Աբանեասեան։**

## ԻՄ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Ես յիշում եմ Տ. Նազարեանի և բոլոր հայ երեխաների համար այն բախտաւոր օրը, երբ 35 տարի սրանից առաջ, Տ. Նազարեանը և նրա ամենալաւ աշխատակից կամ «Աղբիւրի» կնքահայր, ինչպէս մենք անւանում էինք, Գարօ Միրզոյանը երջանիկ ու բաւական դէմքով ներս մտան մանկական գրադարանը (Սերպիևակի փողոցում) և ուրախութեամբ լերին իրանց հետ դես համարեայ թաց, տպարանից նոր դուրս եկած, Կովկասի առաջին հայերէն ամսագրի՝ «Աղբիւրի» առաջին համարը։*

*—Համեցէք, ֆրանսիական, գերմանական, ռուսական մանկական ամսագիրներին միացրէք և հայոցը ասաց Տ Նազարեանը պարծանքով։*

*Որքան յոյսեր ակնկալութիւններ կային։ Հրճւանքով թերթելով «Աղբիւրի» էջերը, խեղճ Գաբօն մէկ-մէկ դիմում էր գրադարանում նստածներին և հարցնում։*

*— Այնպէս չէ, մեր Աղբիւրը յստակ է ու վճիտ, ինչպէս բիւրեղը։ Սպասեցէք, դես մինակ այդ չէ, հայերը կը խոստովանեն նրա անհրաժեշտութիւնը, և մեր Տիգրանը ոչինչ չի խնայիլ նրա համար,—շարունակեց Գաբօն։*

*—Ես կը դնեմ իմ բոլոր ուժերը, պնդեց Նազարեանը։*

*Մանկական գրադարանը Թիֆլիսում բացել էր «Աղբիւրի» առաջին հաւաքը լոյս տեսնելուց երկու ամիս առաջ։*

*Նա սկզբում ծառայում էր իբրև մի ժողովատեղի «Աղբիւրի» լաւ աշխատակիցների (Գաբօ Միրզոյան, Ղ. Ալայեան, Րաֆֆի, Ալէքսանդր Մելիք-Ալահվերդեան, Սօլով-*



*Աշոտ Աթանասեան*

Աշեխաս և Տիրան
Կազմարար Աղբիւրի Յրւիչ

ևօվ-Նեամէլով և այլն) համար։ Քանի՛-քանի՛ մարդիկ եմ տեսնում այժմ «մեծ մարդու», յայտնի հրապարակախօսի, այս կամ այն հիմնարկութեան անդամի, ընկերութեան դերիկատօրի և այլ պատուաւոր կոչումներով. և դրանք բոլորն էլ իրըև կատօտութեան մէջ գտնւած ընկերներ, վայելուչած են ևղել Տ. Նազարեանի կողմից։

— Չի՛ կարելի սրա համար դասը դանել Մնգրեմ, մի ընտանիքում անհնակ ուճաշ դնեիք հայերէնի դասով։ Ընտրեցէք ֆրանսիական դնդազան մանկական թերթերից լաւ մանկական պատմւածքներ, որպէսզի հնարաւորութիւնն տրւի այս մարդուն թարգմանութիւններով զբաղուած ճարել,— անպատրաստ պիտում էր ինձ Տ. Նազարեանը իր «լաւ ընկերներին» հետ միասին։

Կարծում եմ, որ Տ. Նազարեանին մօտիկ ճանաչողները կատրաղ են վկայել, որ բոլոր այդ «լաւ ընկերները» ոչ մի բանի համար մերժում չեն տւացել նրանից։ Մենք միշտ ծիծաղելով ասում էինք նրան «ինչ ոլ ձերն է, բոլորը ձեր լաւ ընկերներին է, բայց ինչ որ նրանցն է, այդ արդէն ձերը չէ»։

Հիշում եմ, երբ ես պիտի գնայի մանելու բարձրագոյն կուրսերը, «Աղբիւրի» խմբագրական դշատ հակը տեղափոխեց իմ բնակարանին, որը կից էր մանկական դրադարանին, իմ բացակայութեան ժամանակ դրադարանը կառավարում էր մի ուս ուսանողուհի, որը հին անդութեան պատճառով պիտի ապրէր Թիֆլիսում։ Նոր ամառը վերադարձայ Պետերբուրգից, Տ. Նազարեանը Թիֆլիսում չէր։ Նա ընտանեական դործերով գնացել էր Շուշի։

«Զարմանալի սիրալիր ու հիւրընկալ մարդ է Տ. Նազարեանը,— նըկատեց ինձ ուսանողուհին.— ահա այդ չամադաններով գնացող ու եկող հիւրերը չեն վերանում ամբողջ ամարին։ Ինչպէս են նրանք տեղաւորւում այս երիք փոքրիկ սենեակներում,— չեմ հասկանում»։

Բայց ամեն մեկը նրա «լաւ ընկերներից» իրեն պարտք էր համարում Թիֆլիս եկած ժամանակը ոչ միայն ներկայանալ «Աղբիւրի» խմբագրատունը, այլև իրենց հետ բերել Տ. Նազարեանին հետ միասին գոնէ մի անձանօթ իրենց մեծ «լաւ ընկերներին» ծանօթ դիշերելու։

Բայց մի շատ ինորող դէպք եղաւ, որ միշտ ծիծաղն տուիթ էր տալիս մեզ։

Շուշուց Թիֆլիս է գալիս Տ. Նազարեանը և գտնում է խմբագրակատը «լաւ ընկերներից» մեկի (որ այժմ շատ մեծ մարդ է դառել) այս նամակը։ «Ներկայանալ էի քեզ մօտ։ Գնում եմ Պետերբուրգ։ Քո իրերից

Տիգրան Յովհաննիսեան

**Աղբիւրի 1 №-ում գետեղւած է նրա կազմած անդրանիկ բերուած։**

*Քեզ դարի ալդում Աղբիւր, Աստւծով մնծանաս գեռ դառնաս։*

վերցրի այն բոլորը, ինչ որ ինձ համար անհրաժեշտ էր։ Յանկանում եմ քեզ բարիր։

Տիգրան Նազարեանը բարի ժպտով ցոյց տւեց մեզ այդ նամակը և հարցրեց՝ թէ արդեօք մենք չենք տեսել նրան. ասել նա աւելացրեց —Շորերիս ու սպիտակեղէններիս համար Աստւած նրա հետ. բայց նա բարի ընկեր չէ ինձ, որովհետև տարել է իր հետ այն սիրելի փոքրիկ գորգս, որ կպցրած էր պատին։ —Մօտ ապագայում երևի ձեզ կը-

Մեզ միայն «Աղբիւրն» դրաստեղանը որովհետև այդ երևի ոչորքիչեք թողնել տանելու,— ծիծաղելով նկատեցինք մենք։

«Այո, այդ ճիշտ է։ Ամեն բան կը գիջեմ, ամեն բան կը տամ, բացի «Աղբիւրից»։

Այն օրւանից անցել է աւելի քան 35 տարի, և Տ. Նազարեանը ապացուցեց իր սէրը դէպի իր գաւակը։ Չը նայելով հայոց պարբերական թերթերի դոյութեան բոլոր ծանր պայմաններին, նա իր գաւակին պահեց ։ 5 տարեկանից էլ աւելի, զոհելով ոչ միայն իր կարողութիւնը, այլև իր առողջութիւնը։ Նա «Աղբիւրի» հետ միշտ կիսում էր իր երանի վերջին հացի պատառը։

Թերևս յաճախ ինքը քաղցած է մնացել, բայց «Աղբիւրը» երբեք չի թողել նա առանց մնուդի։ Ընթացան զանազան ճանապարհներով նրա «լաւ ընկերները» որոնց փոքրիկ պայուսակները պարձան չայրուղ պահարաններ, բայց մեր Տիգրանը բոլոր ժամանակը մնաց իր «Աղբիւրի» դրաստեղանի առաջ։ Անխոժելի յիշողութիւնները և ժանուկների անվեղջ երախտագիտութիւնը թող լինեն Տ. Նազարեանի ամենալաւ վարձատրութիւնը։

**Սօվսանիկա.**

## ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

*Ձորին ջրի ձորում*
*Ջուլը փորնմրտ...*
*Միտը ծերին, ծուի ճուտի ճիտը*
*ծուտ։*

**Աղբիւր 1· տարի 1883 թ· № 4.**

**ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՆԵՐԸ**

*ԲՈՒԹԱՑԻՍ. Օր ն. Տ. Յ· Ասղրում են չը հիասթափուիլ, լսում ենք որ ձեզ նամակ գրողը այժմ ինքն էլ է ցանկութիւն յայտնել մեզ աշխատակցելու։ Թող նրա նամակը ձեզ չը վհատցնէ։*

**Աղբիւր 1. տարի 1883 թ· № 1·**

# ԱՐՑԻ

(Սկիզբը 8արաշ 191ւ)

## ՓԱԿԻՐ

«Հադ» ասաց ու կանգնեց Բիւլջիկի (բէկլօկօա) հրապարակի մէջ մի Ցակիր, առաւօտ արեւագալից մի ժամ անց։ Այդտեղ խռնուած զինուորները արդէն ձախել էին իրենց բիրած կաթն ու մածունը, իւղն ու ձուն, կորկոտն ու ալիւրը, հաւն ու կուտն, հասարեայ թէ իրենց գնելիք մանր ու մուներ ապրանք էլ ձեռք էին բերել, հետզհետէ դիւղ էին վերադառնում։ Մնացել էին բնիկ պարտիզպանները, այգեպանները, փայտահատները, որոնք գնորդներ էին կանչում, սակայն յաճախորդները իրենց ընակարաններից ու կրպակներից դանդաղում էին դուրս գալ։ Ամեն ժլատ գնորդ հաւատացած էր թէ որքան ուշ գնէ, այնքան ժամն ձեռք կը բերէ իրեն հարկաւոր նպաստը։

Ցակիրը ապշած մնաց, երբ տեսաւ հրապարակի ամայութիւնը, ժամը լրացի գնդապետութիւնը և անցուդարձի նւազութիւնը։ Նա կրկնեց առելի եռանդուն ձայնով—«Ես Հադ»—և աչքերը չռեց չորս կողմի կրպակներն ու տների նեղլիկ ու վոքրիկ լուսամուտները։ Բայց Ցակիրի ձայնին արձագանք տուին միմիայն պատարկ կարասները, որոնք շարուած էին բրդէ արհեստանոցի առաջ և ոչոք չը հետաքրքրեցրեց։

—Ինձ կարասներ, ասաց Ցակիրը ժպտալով, դուք սպասում էք այգեպանին, որ գայ ձեզ տանի հընձանը, ձեզ մէջ բամած գինին լցնելու, իսկ ես սպասում եմ, ունկնդիրներ, որ գան և ես նրանց հոգու խորքերը ճշմարտութիւն լցնեմ։ Աշնանը դուք կունենաք յաճախորդներ, իսկ ես չեզիտեմ ամառւայ երեք ամիսն ինչպէս անցկացնեմ։ Ասաց ու նորից սայլատակի վրայ երկու ձագերով և չեզոք գոյնի մի եռոդանի կազմեց։ Նախ իր պատարկ քաշելը դրեց ձախ կողմը, քանդակարդի կտորները ձի կողմը և ընկղմուեց իր մտքերի կատարեալ ովկիանը։

Բիւլջիկը քանի տարի առաջ գոյութիւն ունեցող հոյն քաղաքից մի տաւերն էր մնացել։ Նրա ազգաբնակութեան երեք քառորդ մասը գլխաւորապէս հայերը գնացել էին Բրուսա, իսկ շրջապատի հայկական գիւղերի ժողովրդի էլ էկեղից աւելին գաղթել էր Բուամանցիների նոր գրաւած դաշտերը և տարածւել Բրուսայի շրջակայքը։ Դէբրիշը անտառի մի երկու ժամ ապասելուց յետոյ, երբ նկատեց, որ ժողովուրդն իր ձայնով և խօսքով չի հետքրքրւում միայն մանուկներն են մօտենում ու քրքռում, նա վերկացաւ և դանդաղ քայլերով գնաց Բիւլջիկի Թէքքէն։ Թէքքէի ճաշին մանուկները լուսկ յետոյ, երբ ժառզրաղ դուրս էր գալիս, մեծաւորը ոտքից մինչև գլուխ Ցակիրին դննելուց յետոյ, ասաց։

—Ընկեր դիշերս ձրտիղ պիտի լուսացնեաւ։ Եթէ մօտակայ տեղերում հիւրընկալ չունիս, մեզ հիւր մնայ, վաղ արշալոյսին ճանապարհդ բռնիր։

—Ուրախութեամբ, ասաց Ցակիրը, շնորհակալ եմ ձեր հիւրասիրութիւնից։ Կօդտւեմ ձեր առաջարկից, եթէ մնամ այս քաղաքում Բիւլջիկի մեծ անունը լսել կը, բայց չեմ անսել և այսօր հիասթափւեցայ ամրութիւնը նկատելով։

—Ամայացաւ, պատարկւեց քաղաքը՝ գաւառը, հինգ հազար տուն պոլիեցին դէպի նորանաճ գաւառները։ Նոյնիսկ իմ Թէքքէն ամայացաւ, բայց յուսահատելու կարիք չկայ։ Ամբոխը գնաց, հո Թուաման ու էրմէնիի սարերն ու ձորերը հետները չը տարան։ Այնպիսի բարեբեր հովիտներ ու ձորեր ունին Թուամանի և էրմէնիի բարձունքները, որ միացորդ ժողովուրդը քանը հինգ տարուան մէջ նորից կը լցնէ գեղերն ու աւանները։ Հարիւր տարի առաջ երբ պապս Թլաթից եկել էր այստեղ հաստատել էրմէր Թէքքէն Բիւլջիկը և շրջակայքը դարձեալ այսպէս ամայի էին եղել։ Աչալկիրների ժամանակ Սելջուկները լիովին կոտորելով ամայացրել էին այս երկիրը։ Բայց հարիւր տարուայ ընթացքում այնքան գաղթականներ եկան և այնպէս աճեցան որ այսօր 5000 տուն Բրուսա գաղթելուց յետոյ, դարձեալ մեր գեղերը շէն ու ևքիչ ժամանակում նորից կը լցւին։ Մանաւանդ հիմա, Սրխան Ամիրի օրով, երբ իշխանը Բէկթաշի մարտիկների հետ թշւառ արտասուքն է չորացնում և վշտահարին մխիթարում ու ափոփում է։

—Ուրեմն դուք էլ Արմենեայից էք, ձեր նախորդներն էլ...

—Այո ես չեմ տեսել Ախլաթը, բայց պապս պատմում էր, թէ նա ծնել է վանի լճի ափին և կրթւել Լաթուս։ Մենք պապիս ենք պատմել, նա ինչ. նա անչափ համառ էր և նրանից առացանք մեր ուսումն ու կրթութիւն, ինչպէս հայրս, այնպէս և ես։ Հարիւր տարին լրացել է այն օրից, երբ մեր Թէքքէի խոհանոցի դռները բացած են անցորդների առաջ և մինչև օրս չի հանգչել այն կրակը, որ բռնկցրել է պապս Շէյխ-Մուբարեզը։ Ցոյս ունիմ, որ այդ կրակը անմահ է և անվերջ դարեր պիտի շարունակւի։ Թլաթի մօտ Սեփանից բռնկած կրակն անմահ է։

—Երանի՛ հոգուն, երանի՛ շարունակողներին։ Դուք ինձ շատ հետաքրքրեցիք։ Ցոյս ունիմ, որ պատմութեանդ շարունակութիւնը գեշերը ձեղնից լսեմ խաղաղ հոգով։ Առայժմ ցտեսութիւն...

—Ձեր դարձին սպասում եմ, ձեզ յաջողութիւն։

Ցակիրը կրկին ընկաւ Բիւլջիկի ծուռ ու մուռ փողոցները, որպէսզի կարողանայ իր նպատակին հասնել։ Երբ քաղաքի ծայրի փողոցներից անցնում էր, ինչ որ աղմուկ լսեց մի պարտիզի խորքում գտնւած փոքրիկ խրճիթից։ Ցակիրն անմիջապէս առաջ անցաւ մտաւ այդ խրճիթը։ Ցակիրի երևոյթը զինաթափ արեց խիւ որդուն, որը յարձակւել էր զառամեալ հօրը վրայ նրան խեղդում, փող էր պահանջում. Ծերունու երեսներին չէր հաւատում, չէր լսում կատաղած որդին անվերջ կրկնում էր։

—Փեսայիդ տալու ոսկի՞ ունիս, որդուդ տալու ոսկի չունի՞ս...

«Ես Հադ» ասաց Ցակիրը և կացինը ալ ուսին բռնած կանգնեց։

Անպգամ որդին քրտնաթոր ետ քաշւեց հօրն կրծքի վրայից և ներս մտաւ քրտինքը լուանալու, իսկ ծերունին թիկունքի վրայ պառկած տեղից բարձրանալու ոյժ չունէր։

«—Ես Հադ» կրկնեց Ցակիրը, այս ինչ զարմանալի կեանք է։ Ստակի համար առնչել ու խեղդել ա-

լեւոր հօրը։ Այստեղ մի գարմանալի գաղտնիք կայ, պէտք է պարզել, ասաց, բռնեց ծերուկի ալ թեւից ու նստեցրեց։ Պատմիր ինձ, ալեւոր, մի թագնիլ ճշմարտութիւնը ասա, ինչ միդք ունէիր, որ որդուդ ծնկները չոքել էին կրծքիդ։

—Մի հարցնիլ, միդքս անսահման է, չեմ կարող խոստովանիլ։

—Ուրեմն տար ու կուլ տուր այդ հարուածները, թաղիր սրտիդ խորքերը և քեզ հետ գերեզման իջեցուր։

—Անկասկած, այդպէս էլ կը լինիմ։ Որդին իմ որդս է, նա ինձնից է ծնել, որ ինձ ուտէ, թոքերս ու սիրտս ըլքռէ։

—Ախաթ ինչի՞. քանի՜ մէկ պիտի տանջուիր։ Հանգիր, տայիր մի բանի ստակ, հեռացնէիր և խաղաղացնէիր, ինչ կորուստ կունենայիր։

—Ասելն հեշտ է, քննելը դիւրին, բայց գործադրիլը...

—Միթէ քո որդին մի քանի ստակ չէր վաստակիլ քեզ համար։

—Նա ցեց է պարձիլ, անվերջ կրծել է կուրծքս ու սիրտս...

—Ո՞վ է քո դուխանը քաշել նզերիդ հետ, ո՞վ է քո խաշը պահպանել գայլերի դէմ, ո՞վ է ուսերը դէմ դրել տանդ գևրանները կործանումից փրկել, ասաց մտնելով երիտասարդ որդին, որը քսան տարին նոր էր մտել, որի դէմքին աղտամաղը նոր էր բողբոջել։

—Լաւիր անտակ, լուիր, խայտառակ, ասաց զայրացած ծերուկը։

—Եթէ ես լսեմ, քարիրը կաղաղակէն, հայր, ես ինչ եմ արել, որ ինձ զրկանքի մէջ ես թողել, աբա չունիմ, շալ չունիմ, գօտի չունիմ, գդակ չունիմ, իսկ վեսայիդ ոսկիներ ես շպրտուս։

—Լաւիր, անզգամ, աշխարհ պիտի կործէ։ Թէ ես գանձարան ունիմ....

—Էլ չեմ ուզում ապրել այս յարկի տակ...

—Ծո՛ գնա՛յ ծուխն ընկիր։ Ծո՛ գնա՛յ ձկներին կեր գարձիր, նեռից գոռաց մայրը, գնա՛ քո երեսը չը տեսնեմ...

—Աբի՛, ծո՛ արի ինձ մօտ, անունդ ինչ է, ասաց Յակիրը։

—Ասլան, ասաց բորբոքած երիտասարդը։

—Արի՛ ինձ հետ, քեզ աբա էլ կը տամ, կօշիկ էլ, շալ էլ կը տամ, գօտիկ էլ, ոտակ էլ կը տամ, ոսկի էլ գնա՛ մանր ևէնչարական օջախը, ապրիր իշխանի պէս։

—Գնանք, թող բրիշակ գտնայ այն տունը, որ վաստակաւորը չը պիտի վայելէ։

—Արի գնանք ցոյց տուր ինձ, թէ որտեղ են ծախում հագուստ ու կապուստ։

—Երթաս ու չը գաս, գոռաց նեռից գարձեալ յուզուած մայրը, էլ ետ չը գառնաս այս խռովութեան բոյնը։

Յակիրը Ասլանին տարաւ շուկայ, կարևոր իրերը գնեց և միասին բարձրս գնացին։ Երբ լոզանալուց յետոյ գուրս եկան, Ասլանն ածիլուց, հագնուց, զարդարուց ու իշխանի տեսք ստացաւ։ Յակիրը իր որսի հետ մի քանի ժամ Բիւէջիկի փողոցները խափանուելուց յետոյ, իրիկնադէմին եկան Թէքքէ հանգստանալու և գիշերելու։

Ասլանն ևէնիչէրական օջախը գնալու լուրը յուզեց, Բիւէջիկի այն պատանիներին և երիտասարդներին, որոնք կեանքում առանց վայելելու միմիայն աշխատել, տանջուիլ ու տառապիլ էին։ Այդ գիշերը քանի՜ չափ չանէին, մէկ մէկ եկան բաղխեցին Թէքքէի դուռը, գնացին ու միացան Յակիրի խմբին։ Յակիրը բացեց իր գօտու քսակի ծայրը և այնտեղից քսան ոսկի հանեց ու տուաւ եէնիչէրացու մանուկներին, որոնք առաւօտ ամենքն էլ պիտի զարթնուէին, պատրաստուէին Բրուսա գնալու և եէնիչէրական օջախները մտնելու։

Երբ գիշերուան ընթրիքն տարտեցին և խաղաղացան, Յակիրն ասաց իր կոչին հետևող մանուկներին.

—Բռնութեան չղթաները պիտի կործանուին և աշխատաւորը իր քրտնքի արդիւնքով պիտի կերակրուի ու պիտի անուցանէ իր ընտանիքը։ Այլևս պիտի Ջընջուին աշխարհից կոմսերն ու բէգերը, կալւածատէրերն ու յափշտակիչները։ Ձեր ծնողները ձեզ զրկում էին, ոչ թէ ձեր աշխատանք իւրացնելու գանձարաններ պատրաստելու, կամ սոսկ իրենք վայելելու համար, այլ այդ հարստածներով կոմսերին և բէգերին ու խաներին բարարելու համար։ Միթէ ձեզ յայտնի չէ, որ ձեր ծնողները ձեր ընտանիքի անդամների աշխատանքի արդիւնքի, հողի բերած հասոյթի մեծագոյն մասը պատրաստած են վճարելու յափշտակիչ հողի տէրերին, որպէսզի ձեզ հողի վրայից չանջատեն։ Ես ձեզ կոչ եմ անում գալ Բէկթաշի միաբանութեան անդամակցելու, մեր շարքերը ուժեղացնելու, որպէսզի կարողանանք բիւզանդական կայսերական դահը կործանել, Ալպէդին սուլթանի որդիների թախթերը փշրել, Ջնջել աշխարհի երեսից հողի սեպհականութիւնը և այդ հողերը յանձնել իսկական հողի մշակողներին—աշխատաւոր ժողովուրդին, որպէսզի լի եռանդով մշակեն բերք ու քարի հասցնեն կերակրելու և ապրեցնելու մեզ։ Դուք պիտի գնաք բռնաւորների սրի և հրի դէմ կռուելու ձեր կեանքը վտանգի ենթարկելու, որպէսզի ազատէք հողը յափշտակիչ աւազակ ազնուականներից և յանձնէք նրան հողագործներին։ Ձեզնից շատերը կարող են գոհ գնալ այս իրիզախ կռուին, բայց վատահ կարող էք առաջ գնալ, հաւատալով որ դուք արդար կռիւ էք մղելու, յաղթանակելու էք և ձեր եղբայրներին, քոյրերին և յաջորդ սերնդին ազատելու էք բռնակալների հասատ ու պինդ չղթաներից։ Թող վախկոտները հեռանան, թուլամորթները վերադառնան իրենց գերութեան չղթան կրելու, իսկ կորիճները հետևեն Բէկթաշի հերոսական գնդերին։

—Մենք ձեզ հետ նոյնիսկ դժոխքի կրակների մէջ կը գլորուենք, միայն թէ մեզ երգուեցէք, թէ սրերը պատեան չը պիտի դնէք, մինչև որ կործանուի Հռոմէական-բիւզանդական կայսերութիւնը, ասաց հօր կըրծքին չոքած և նրան խեղդելու չանդգնած որդին։

—Մենք չենք սարսափում ոչ մահից, ոչ էլ յուշական հրից, ասաց մի ուրիշը. տարէք մեզ ամենազարհուրելի ճակատամարտները, միայն թէ մեզ վըստահացրէք, որ Բիւզանդիոնի կայսեր պահոյքը փըշրելուց յետոյ՝ սեպհականութիւնն իսպառ պիտի Ջնջի աշխարհի երեսից։

—Է՞լ ինչի՞ ենք կռւում, ինչի՞ ենք թշւառ մարդկութեան կարմիր արիւնով ողողում երկրի երեսը, եթէ պիտի վերահաստատուին սեպհականութիւնը։ Ինչի՞ պիտի մենք անձնազոհ լինինք, մինչև որ չապահովենք ընդհանրութեան հաւասարութեան իրաւունքը։ Այլևս գոյութիւն չունին սիւնիները, շիաները, Հուսէյնները, Արիոսները, սրանից յետոյ ամենքն էլ հաւասարեալ մարդ են և եղբայրաբար, անխտիր պիտի ապրին իրար հետ։ Մեր նշանաբանն է «Ես Հադ», ճշմարտութիւնը, որն առանց արդարութեան, հաւասարութեան, անխտրութեան և եղբայրութեան չի կարող գոյութիւն ունենալ։

—Թող կործանուի սեպհականութեան պաշտպան,

Բիւզանդեան, մենք այդ նպատակին հասնելու համար չենք խնայիլ մեր կեանքը, ասոնց յոգնած, քնաթաթախ մանուկները և տարածելեցան յոտակի խրխինջի վրայ քնելու, հանգստանալու, որպէսզի առաւօտ կանուխ ընկնեն դէպի Բրուսա Թէքէ մանելու։

Երբ ամենքն անձնատուր եղան Մորփէոսին, սկսեցին անդադար խորխոջալ, Ծակիրը նստած ճրագի լոյսի մօտ կարդում էր Մօլլա-Հենքեարի բանաստեղծութեան այն կտորները, որն աւետում էր մարդկութեան, թէ նա պիտի զարթնի մի օր, պիտի չնչէ աշխարհի երեսից յափշտակիչ դիւցազներ բէգերին, մելիքներին և ազատներին և պիտի ապահէ Թշուառ աշխատաւորութիւնը նրանց սոսկալի տարկութիւնից։ Մինչ այս քաղցր տանուլջների մէջն էր Ծակիրը, Թէքէի մեծաւորն առաջ եկաւ և ողջունելով ասաց։

—Ոչոք Քող չը պարծենայ, Թէ իր յափշտակած իշխանութիւնը կարող է դարեր տևել, ոչոք Քող չը սգայ, Թէ իր սև օրը կարող է աղջամղջում խաւարել ու անհետանալ, քանի որ աշխարհի երեսին յարատև ոչինչ չկայ։ Խաւարին միշտ հետևել է լոյսը, քունակալին՝ առաւրեկիչը, սգաւորին՝ յոյսը, անկեալին՝ մխիթարիչը։ Առաւօտ արևի լոյսի տակ ձեր դէմքը մռայլած էր գիշերայ խաւարի մէջ, աղօտ ճրագի ցոլքերի տակ ձեր ճակատի վրայ նկատում եմ նրա տանջահատքները։ Ասա ինձ, ընկեր, ասա, ինչ բան քեզ կերպարանափոխեց, ասա և ինձ էլ հրահանգիր, որպէսզի գիշերանոց հանդստին ուսխութեան յոյսերով անկողին մտնեմ, քաղցր ցնորքներին անձնատուր լինելով բոլոր լոյսին դիմաւորեմ։

—Ի՞նչ ասեմ, ընկեր, ասաց Ծակիրը և ցոյց տուեց սրահի պատերի տակ փսեաթների վրայ տարածած պատանիներին, որոնք անդորը քնած, անդադար խորխոջում էին և ոտքերում նրան ես թշուառ որմնում էք, ասաց, կանչում էին, եկան, այժմ մնում է ինձ հրաժեշտ և օգնական շարունակել իմ ուղին, որպէսզի սրանց թիւը հասցնեմ ժ հարիւրի և գնամ կործանելու բռնակալների չղթաները։

—Բռնակալների չղթաները փշրելու համար ոչ թէ հազար, այլ բիւր հազար հետևողներ կը գտան, կը միանան քեզ, եթէ միայն հաւատացած լինեն, որ նոր առաջնորդները նորանոր չղթաներ չը պիտի դարբնեն այդ թշուառներին վերստին չղթայելու համար։

—Այո, իրաւունք ունես։ Բայց մենք ոչ սուլթան ունենք, ոչ շահնշահ, ոչ Թագաւոր ունինք, ոչ էլ կայսր։ Ոչ պատրիարք ունինք ոչ խալիֆ, ոչ մետրոպոլիտ առնիսը, ոչ էլ Պապ։ Մենք ուխտած Ծակիրներ ենք, աղքատ ու մշակ, սեր առաջնորդն է մեր Շէյխը, որ մեր սպասաւորն է և չի կարող իւրացնել մի քեզ հաղ էլ ինչի պիտի վախենանք, որ մեր դէմն բռնվին նորանոր կայսրներ ու սուլթաններ.

—Եթէ միշտ արթուն ձեռք, անդուլա նպատակի կը հասնէք, իսկ տարաբաղդ բոր եթէ քնանաք։

—Մենք մեր պարտքը կատարենք, լաւ ժառանգութիւն թողնենք մեր յաջորդներին, քող նրանք էլ չքաւոր սպրեն և պահպանեն իրանց ազատ կեանքը։

—Ի՞նչ գաղտնիք պահես, ընկեր, ես վախենում եմ, որ էլ—Տողրուլի ժառանգները մինչև վերջը չը յարգեն Բէկքաշի վարդապետութիւնը և մի օր, նրանք էլ կայսրներ դառնալու տենչով բռնկած, սանձեն աշխատաւոր այն ժողովրդին, որոնք նրանց են յանձնում իրենց կեանքն ու բաղդը։

—Այն օրը, որ օրը Բէկքաշի Թէքէների օջախների կրակի բոցերը հանդչեն, այն օրը, երբ ցրւեն Բէկքաշի օջախների քաջերի եէնիչէրիները, այն օրը խաւարի օժանի զաւակների արևը, և նրանք կը գտատպտտուն յաւիտենական խաւարի իշխանութեան պետութիւնը Բէկքաշինն է, իշխանութիւնը ժողովրդի այն զաւակներինն է, որոնք ստրուած են Թէքէների։ Մեր երկրի տէրն ու տնօրէնը Բէկքաշի օջախների կարիճներն են, ինչպէս որ տեսնում ես, այնպէս էլ պիտի գործադրեն։

—Այո, եթէ չարութեան թոյնը չը լցնեն եէնիչէրների օջախների մէջ։

—Մեր վարդապետութեան ամեն մի կէտը պարզ է իւրաքանչիւր եէնիչէրին, իսկ եէնիչէրին էլ—Տօղրուլի որդին չէ, այլ ժողովրդի։ Մի՞թէ ժողովրդի իրաւունքները ոտքի տակ կը տրորեն այն կարիճները, որոնք ժողովրդի ազատութեան, հաւասարութեան և բաղդատութեան համար զէնք բարձրացրած պիտի կռւեն բռնակալների դէմ։ Մենք այնպիսի գաղափարին ենք ծառայում, եէնիչէրին այնպիսի իդէալի է ծառայում, որ նա չի կարող թէքւել։ Մանաւանդ որ մենք օրէցօր ինչպէս եէնիչէրի ինարի, նոյնպէս ժողովրդի հոգու խորքերը ցանում ենք Մօլլա—Հենքեարի և Բէկքաշի վարդապետութեան այն ընտիր գոհարները, որ ժամանակին պիտի աճեն և կերպարանափոխեն ամբողջ մարդկութեան վիճակը, հեռու մնալից տխուր պատկերները և դժոխային զարհուրելի կատաղամարտութիւնը։

Երանի՛ օր առաջ կործանւի բիւզանդական գահը, մենք կարողանանք իւրացնել աշխարհի հողերը և բաժանել աշխատաւոր ժողովրդին ու խաղաղեցնել նրա վիճակը։ Հեռ զէնքը բոլի, ասաց մեծաւորը, առանց գրական բացատրութիւն առանալու Ծակիրից։

Աջլալոյսին Ծակիրը իր պատանիներին յանձնեց Բէկքաշի Թէքէի մեծաւորին կրթելու և պահպանելու մինչև իր վերադարձը, իսկ ինքը հանապարհ ընկաւ դէպի Անդորա, Սերաստեա և Ամասեա, ուր երեք տարւայ ընթացքում հազարի չափ պատանիներ ու կարիճներ հաւաքած, եկաւ անցաւ Բրուսա տեղաւորեց իրենց համար յատկապէս պատրաստած Թէքէն։





## ԻՄ ՆԻՒԸ

*Մ. Ճ.*

*Ես քեզ սիրեցի ծաղկի պէս զարնան,*
*Սիրեցի մաքուր, եթերային սրտով.*
*Երդում եմ պաշտել հոգիդ աննման,*
*Ապրել ու շնչել միայն քեզ համար։*

*Պարզեցիր ծեռդ ընտրեցիր մէկին,*
*Փակցրիր նրան քո կրծքին.*
*Նա քո կրծքին չի թառամի,*
*Նա միշտ կապրի ու կը բուրի։*

**Ս. Զիրեքի**

4 փետր. 918.
Թիֆլիս

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՇՕԼՕՄ ԱՇԻԻ «ԴԷՊԻ ՍԻՕՆ» ՊԻԷՍԻ

Ներկայ պիէսը, թարգմանաբար առաջարկում ենք հայ հասարակութեանը, մի կատարեալ գրական գեղանի երկ չէ, գրուած դրամատիկական արուեստի հիմնական պահանջների համաձայն. սակայն մի խոշոր նորութիւն է թատերական աշխարհում այն պատճառով, որ գրուած է հրէական ժարգոնով և իր մէջ վառ գոյներով պատկերացնում է այն բոլոր հասարակական հոսանքները, ձգտումները ու որոնումները և որանից առաջացած թախիծն ու ոգևորութիւնը, որոնցով համակուած՝ տառապում ու այնքան զոհեր է տալիս՝ ոչ միայն պատմականօրէն, այլև, համարձակ կարելի է ասել, ներկայումս էլ մեծ ու հանճարեղ հրէական ազգը։

Հայերս, որ՝ ընդհանուր կարծիքով այդ ժշուառ և իր ժշուառութեան մէջ մեծ ազգի վիճակակից ենք մեր քաղաքական-պատմական կեանքի շատ կողմերով, ի հարկէ, անտարբեր չենք կարող լինել դէպի այդ ազգը յուզող ներքին անհատական-ազգային և արտաքին՝ համամարդկային տենչերն ու ցաւերը։ Մենք պիտի հետաքրքրուենք, գէթ ծանօթանանք, եթէ ոչ նրանց ուսումնասիրենք՝ մարդկութեան մտքի, զգացմունքի և կամքի տիտաններ ասած և տուող այս ազգի գալատարական ձգտումների, նրանց մէջ գոյութիւն ունեցող «անծեալ հարցերին» հետ և գուցէ շատ խրատական բաներ գտնենք մեզ համար։ Մենք պարտական ենք ուսումնասիրելու ոչ միայն մեր հարևան վրացիների, Թուրքերի և այլ ժողովուրդների կենցաղը, գրականութիւնը և այլն, այլև հրէաների-թէ վերև յիշած պատճառներով, թէ այն պատճառով, որ մեր երկրում էլ, մեզ հետ միասին, բաւական հրէաներ են ապրում և թէ այն պատճառով, որ գժբաղդաբար, մեզանում էլ շատերը թիւր գաղափար ունեն այդ առեղծւածային ժողովուրդի մասին։ Շատ հայերի համար էլ հրէան լոկ «չարչի ջհուդ է», մի ժողովուրդ, որի մասին գոյութիւն ունեցող առասպելները, դժբաղդաբար, մեր մէջ էլ գոյութիւն ունին մասամբ։

Գալով Շօլօմ Աշի ներկայ պիէսին՝ հարկաւոր ենք համարում ընթերցողներին ծանօթացնել ռուս թատրոնական մամուլի կարծիքի հետ և այդ նպատակով տպագրում ենք «Театр и Искусство» շաբաթաթերթի ներկայ յօդուածը, որ գրուած է այդ պիէսի ներկայացման առիթով (Драматическій театр, дирекція В. Ф Комиссаржевской)։

— Սա ինչ պիէս է։ Այստեղ պահպանուած չեն դրամատիկական արուեստի հիմնական պահանջները։

Այդպէս ասում են գիտակ մարդիկ, իսկ ոչ գիտակները չեն էլ յիշում կանոնները։ Նրանք նայում և լսում են՝ շնչառութիւններն իրանց քաշած, լարուած ու յափշտակուած ուշադրութեամբ։

Իսկական բանաստեղծութեան յաղթական ոյժը թարմ հովերը ամենքին նւաճում են իրենց հմայքով. թէ հնութիւնից հեղինակի վառ, խոր ու գեղեցիկ սիմվոլները, թէ ոգևորուած, գաղափարական և խոր մտածուած դերակատարութիւնը և թէ բեմի գեղեցիկ ոճային ու արուեստօրէն յարդարումը։

Ինչպիսի՜ բաղդաւոր զուգադիպութիւն...

Իսկ սիւժէն։ Այդպիսի բան չը կայ։ Ոչինչ ոչնչի վրայ չի սերտաճուում, ոչինչ ոչնչի չի սպասում, ոչինչ ոչնչի նոյն իսկ չի խարում։

Մի ծերունի հրէա պահանջ է կրում իր կորցրած ուսերից մի կողմը ձգել առօրեայ գոյութեան բեռը, երկրային և մարդկային, չափազանց մարդկային հոգսերի բեռը։

Նոր «ես» կատարելու վճիռը հասունացել է, պէտք է գնալ այնտեղ, հին հայրենիքը, և այնտեղ,

Հրեականութիւնը մարդկային պատմութեան ընթացքում երկու անգամ ստիպուած կերպարանափոխել է աշխարհին հոգեւոր դիմքը։ Նոր ժամանակների արշալոյսին մարդկութեան ամենաստիպ ուժերի յղութիւնը եւս հրեան—ՄԱՐԿՍԻ —վարդապետութիւնն է պարզել։

նախնիքների սրբազան երկրում, գլուխը վայր դնել։ Պէտք է հրաժեշտ տալ բոլորին ու ամենքին—թէ մեռելներին, որոնք վառած են «os turaքեան» գիրկմամնոցում, և թէ կենդանի որդիներին ու թոռներին, որոնք ցրուած են աշխարհում, կարծես հենաւորց բնից պոկուած ճուղեր լինեն։

Եւ նրանք, այդ որդիները ու թոռները, հաւաքուում են չորս կողմից։

Անցեալ, բիբլիական, հրէականութեան ներկայացուցչի հին տանը հաւաքուում են երկու սերունդի ներկայացուցիչներ։ Որդիները —տիպիկ բուրժուաներ, տարուկ և տէր ներկայ օրւայ՝ օգտի և կուշտ բարեկեցութեան իրանց մանր ու մերձաւոր շահերով, և թոռները, որոնց հոգիներում իշ ու բան էր կարթել և կանչում, արթնացնում է։ Նրանցն է պատգան, նրանց տիրում է յուզմունք և սուրբ մտատանջութիւն։ Մէկի մէջ յարութիւն են առել հոգևոր Սիօնի իդէալները, միւսում լռացավառել է աղդայնութեան հուրը խնկ երրորդը բանուոր կամ արհեստաւոր, ամբողջովին նուիրուել է՝ ընդհանուր բարիքի համար մղող՝ սուրբ պայքարին։ Նրա առաջ կանգնած է սօցիալիզմի մեծ պրօբլէմը, նրա մէջ արթնացել է հրէա—մարդը և նա չի ուզում աղդային քայքայիչութեան համար՝ կտրել ազգակցութեան թանկագին կապերը ամբողջ մարդկութեան հետ։ Իր նախնիքներին մարդապետների հոգիներից նա նոր Մեսիա է կռում, ազատագրուած և միացեալ մարդկութեան Մեսիա.

Միւս որդու երեսանները կրկնած են։ Տգան Բէրնի համալսարանի ուսանող է, որը իւրայիններից չատ է ճնացել, իսկ ուրիշներին չի հասել։ Նա չի յիշում, թէ որտեղից է ինքը ևկել, և չըպիտէ, թէ ուր է գնում։ Ամենքը օտար են նրա համար, իսկ նա օտար է ամենքի համար. նա հաւատա չունի. նաը պիտէ, ինչի՞ համար մըրցէ և դէպի ուր ձգտէ,

Նրա քոյրը, որ կրակօվի համալսարանի ուսանողուհի է, ամբողջովին համակուած է «օտարութեան» (գոլուտի) պօէզիայի համայքներով։ Նա ներշնչուած է լեհական ոգով և փայփայում է լեհական ցնորքներ։ Ընկնելով ծերունի պապի տունը, որ գտնուում է գուննատ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՏՈՒԹԻՒՆ

# ԴԷՊԻ ՍԻՕՆ

*ԹԱՏԵՐԱԽԱՂ ՅԱՐԱՐՈՒԱԾՈՎ*

ՀԵՂ. ԶՕԼԱ ՇԱՀ

*Յատկապէս Տարագի՝ համար թարգմանեց*

ԶԱԼԱԼ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

**Ռէբ Յօճօն Մերուէնի հրէայ, փոքրիկ աւանի բնակիչ։**
**Մալկիէլ,** *սրա կինը։*
**Բօռուխ (Ցոյնը Բարիս** *հոգևոր մեծ որդին վարդապետի վաճառական։*
**Ելենա,** *սրա կինը։*
**Յովսեփ, Ռէբ Յօճօնի կրտսեր որդին, հայկական գաւառում։**
**Խանիէլ,** *սրա կինը, հասարակ հրէուհի։*
**Բհռօա,** *Ռէբ Յօճօնի աղջիկը։*
**Կաճ,** *սրա ամուսինը, գերմանական հրէայ, Լայպցիգից։*
**Անդրէ, Բօրիսի և Ելենայի** *մեծ որդին, շէկցարական ուսանող։*
*Իւսիֆնա, սրանց աղջիկը, սովորում է կրակովում։*
*Խայէմ, Յովսէփի մեծ որդին, արհեստաւոր։*
*Բհճ Ջիօճ, Յովսէփի միջնակ որդին, հրէական բարձրագոյն հոգևոր դպրոցի նախկին ուսանող (էշիբօաճիկ)*
*Մոշխա, Յովսէփի կրտսեր որդին։*
*Բէխէ–Լէյա, Մալկիէլի պառաւ ապախինը։*
*Ենթ ռի ուրուականը, որը լինական քաղաւոր կապիմիրի սիրուհին է եղել։*
*Մի խումբ հրեաներ, որոնք վաւաբաչում են լիալուսինը։*

*Գործողութեան տեղը—Նագմէրկ աւանը, Վիսլա գետի վրայ։*

**Ժամանակը—երէկ, այսօր եւ վաղը։**

*Յաղթանակական պանդուխտները արտասահմանից դեպի Սիսի*

Վիճակի ափերին, մեծն Լեհաստանի հին ասերակների մէջ, ուր կենդանի են աւանդութիւնները պերճաշուք թագաւոր Կազիմերի փայլուն օրերի և նրա սիրեցեալ Բարբերի մասին, որ մի չքնաղ հրեուհի է եղել, օպալեայ գերձակի աղջիկ, — նա ամբողջովին անձնատուր է լինում տարօրինակ ու կիսամիստիկ անուրջների, որոնցում օտարոտի կերպով հիւսւել են հրեական հոգու ակնկալութիւնները և լեհական պատմութեան ու լեհական երկրի պօէզեան։

Մերունին չփոթւում է, չի կարողանում գլուխ հանել այդ բոլորնոր գաղափարների, նոր խօսքերի, նոր զգացմունքների ու տրամադրութիւնների հեղեղի մէջ։ Ակներև է, որ հասել են Մեսիայի ժամանակները, հասել է մեծ յեղաշրջումների, աշխարհի վերաշինութեան պատմական մեծ չրջանը՝ վերջնական կատարելագործութեան հասնելու համար։ Այնպիսի դարաշրջան, երբ ամենքը գիտակցութեան կը գան, երբ Քշւառութեան բաժակը կը լցւի, և կը հասնէ վերջնական ազատագրութեան մեծ ժամը, որից յետոյ նոր աշխարհ ուրնոր կեանք կը վերածնւի, և գայլը խաղաղ կերպով կը պառկէ գառան մօտ։

Բայց ամեն մի ժամանակաշրջան, ամեն մի ազգ և ամեն մի մարդ ունի իր Մեսիան։

Մի խաղաղ լուսնկայ գիշեր ծերունիները հեռանում, գնում են դէպի իրանց Մեսիան, և երկու սերունդ որդիները ու թոռները ճանապարհում են նրանց մինչև ուղեփակը (շլագբաում)։

—Դէ՛ք մի բուռը հող վերցրու քեղ հետ գաղթակա՛ց, այս աքսորավայր երկրից, որը քեզ համար հայրենիք է դառել և որտեղ գտնւում են քո պապերի գերեզմանները։ Այս հողի մէջ է քո սրտի արիւնը, քո ոսկորների ծոցը։

Սակայն յուիսենական պանդխտին ոչինչ հարկաւոր չէ աքսորավայր երկրից։ Երկրի և երկրային սիրոտիքների ու հոգսերի մասին չէ, որ մտածում է ծերունին։

Հրաժեշտի խորհրդաւոր ժամը համակում է ամենքին իր միստիկական սառսուռով։ Մեծ ու հզօր ձերգաւումը համակում է մատաղահաս երիտասարդներին և միայն ինքնագոհ, կուշտ հայրերն են մինչև վերջը կապւած մնում տեղի, սրա մանր ու սուր շահերի, իրանց գործերի և կալքի հետ։

Մատաղ հոգիները ակնյայտնի կերպով արձագանք են տալիս մեծ ու խորհուրդաւոր կոչին։ Շեփորի ձայնը հնչում է տիրաբար ու հրաւիրում և ամենքը ուղղւում են այնտեղ, ուղեկապի այն կողմը, յառաջ, դէպի խորհուրդաւոր հեռուն, ամենքը միասին և իւրաքանչիւրն առանձին, ամեն մէկը իր իդէալի համաձայն։

—Սօցիալ-դեմօկրատն էլ է ուղևորւում դէպի այդ միստիկական հեռուն։

—Այո՛, և նա՛, նա գնում է դէպի իր Մեսիան՝ համամարդկային երջանկութեան մասին ունեցած իր մեծ յոյսով ու մեծ մտորմունքով։

Մնում են միայն աղջիկը, որ հոգով կապւել է լեհական հողի հետ ու համակւել օտար մտորումներով և դժբաղդ երիտասարդը, որը ճանապարհի ճիւղաւորման տեղը մոլորւել ու կորցրել է ամեն մի ակզբունք ու վախճան։

Խորհրդաւոր մշուշի ու հինաւուրց ամրոցի մթնայ ուերակների մէջ կենդանանում է օտարոտի հեքեաթը Եսթերի մասին, որ պատմել է պառաւ դայեակը։ Ասերակների մէջ թափառում է գեղանի հրեուհու ոսկեայ սեսիլը։ Նա սրոնում էր իր աչքերը, այն կասկածոտ աչքերը, որոնք համայել էին պան—Թադեաւորին։ Երբ մահը անողորմ կերպով փակեց այդ սքանչելի աչքերը, կազմիրը՝ հանելով նրանց՝ շրջանակից ոսկեայ օղակներով ու դրեց բեմի վրայ, որը կառուցել էր մեծ պահլիճում և սև մահուդով ծածկել։ Այդ ժամանակից սկսած ասերակների մէջ թափառում է չքնաղ հրեուհու կոյր սեսիլը և ի զուր որոնում իր կորած աչքերը։ Աղջիկը նետւում է սեսիլի մօտ և նրա հետ գնում է որոնումներ կատարելու։

Ձեռք ձեռքի տւած կոյր սեսիլի հետ՝ թափառում է նա՝ շլացած օտար մտորումներով, թափառում է օտարութեան մէջ, մի գերեզմանոցում, որ ոփուած է մեռեալ անուրջներով անդառնալի անցեալի մասին, իսկ երիտասարդը, նրա եղբայրը, մնում է մենակ ուղեփակի մօտ։ Նա չը գիտէ իր կեանքի միտքն ու նպատակը. չի յիշում, թէ որտեղից է նա եկել. չը գիտէ, թէ ուր է գնում։ Նա ձգւած է ճանապարհի ճիւղաւորման մօտ, նրա մօտով սրագընթաց անցնում է խառվայոյզ կեանքը, նրա մօտով մարդիկ սլանում են դէպի իրանց նպատակը։ Բայց նա կտրւել է հօրից ու մօրից, մոռացել է հին աւանդութիւնները և, սակայն, ձեռք չի բերել նոր հաւատ... Եւ աւելի ու աւելի հեռուից ու թոյլ է հնչում կոչի ձայնը։

Բայց այդ կոչը ոչ միայն արձագանք չի գտնում երիտասարդի աւերւած հոգում, որը հաւատ ու ձգտումներ չունի։ Նրան օտար է ծնում նաև դմայլւած աղջիկայ հոգին, որն ամբողջովին հիւսւած է բարձր ոգևորութիւնից ու ձգտումներից, որովհետև «գօլուսխ» (օտարութեան) ամբողջ տրագէտիան, տարագրութեան ողբերգութիւնը կայանում է նրանում, որ օտարութիւնը, այդ չար խորթ մայրը նոյն իսկ ներելի է դառնում իր որդեգիրների համար. չը նայած որ նրանց շղթայում է տրկութեան ծանր շղթաներով։ Եւ քշւառ որդեգիրները փափագով կպչում են օտարութեանը, նրանք սեղմում են նրա կարծես հարազատ կրծքին։ Մոռացւում են նւաստացուցիչ հարւածները, մոռացւում են սովն ու ղրկանքները։ Տառապեալների հոգում ապրող ներոյ ու գուրգուրանքի պահանջը, չը լացած արցունքների միջով մանկադրում է օտարութեան անողորմ իրականութիւնը հրապուրիչ, բայց խաբուսիկ երևոյթներով, որոնցում ամեն բան թանգ է, մօտ ու հարազատ։ Պոկւած ընձուղները նորից ծլում ու արմատ են ձգում օտար հողում, մնւում են նրա հիւթերով, նրա վրայ աճում և ծաղկում են, նրան բեղմնաւորում են իրանց սերմերով և մեռնելով՝ խառնւում են այդ հողի հետ, նրա մասն են դառնում և նորից վերածնւում նրա վրայ...

Այո՛ չոր ուրւագիծը այդ պօէմի, որ ներշնչած է մեսիական մեծ ցնորքով։

Մեսիա... Ումանց համար նա մարմնացել է դէմս Քրիստոսի. բայց քրիստոնէական ճշմարտութիւնը ահա 19-դար շողշողում է մարդկութեան առաջ. ինչի՞ տալա չարութիւնը դեռ թագաւորում է երկրի վրայ...

Եւ հրէաները սպասում են երկրորդ գալստեանը, սպասում են իրանց Մեսիային։

Միւսների համար Մեսիան-հաւատն է դէպի մարդկութեան անսահման առաջադիմութիւնը, նրա ազատագրման գաղափարը՝ երջանիկ ագեղեցիկ կեանքի համար։

Դօստօևսկու տեսակէտից-դա Աստւածամարդու իդէալն է. Նիցշէի տեսակէտից—դա մարդ-աստծու, գերմարդի իդէալն է. ամենքի համար-դա վերջին յոյսը, վերջին ապաստանն է, և վայ նրան, ով այդ մխիթարութիւնը չունի։

Այդ գաղափարը մանաւանդ ուժեղ է թշւառ ու ճնշուած ժողովուրդների մէջ։ Լինհասաանի թշւառութիւնները լինական ժողովրդի մէջ ծնեցին մեսսիականութեան գաղափարը և լինական ցնորքի աւերումից յետոյ Տօնւիանսկին և Միցկեւիչը միխթարութիւն էին որոնում մեսսիականութեան միտքը ակնկալութիւնների մէջ։

Ահա այդ մեսսիական ցնորքներով հարուստ լինական հողի վրայ փթթում են երիտասարդ հրեայ հեղինակի մեսսիական ցնորքները, հեղինակի, որի արեան մէջ, հնադարեան աւանդութիւններում և ազգային ակնկալութիւններում է դնում մեսսիականութեան գաղափարը...

Գիէսը գրուած է ժարգոնով, այսինքն այնպիսի լեզուով, որը չը գիտէ երկրագնդի և ոչ մի կուլտուրական ազգ, այնպիսի մի լեզուով, որ չը գիտէ նոյն իսկ կուլտուրական հրեականութեան ինքը առաւելագոյն մասը։

Այս պօէմը, որի մէջ ընդհարւում են այնպիսի խորը փիլիսոփայական սիմւոլներ, որը ներշնչուած է այնպիսի հրաշալի պօէզիայով, երևացել է նոյն իսկ ոչ քէ գրական շրջաններում, այլ գրական աշխարհից դուրս, հրեական թաղի մութ, նեղ ու մռայլ, ծուռ ու մուռ փողոցում։ Այդտեղ էլ, ուրիմն, խմորւում են ներկայ ժամանակին վերաբերւող ամենաւսէտ մտքեր, այնտեղ էլ ընդհարւում են աշխարհիս պայծառ ու խռովայոյզ գաղափարները, այնտեղ էլ, ուրիմն, գրականութիւն կայ... Որովհետև ժարգոնով գրուած այդ պօէմը իսկական գրականութիւն է և իսկական բանաստեղծութիւն. իսկ բանագործութեան արւեստի (драматургія) տեսակէտից կարելի է նոյն իսկ չափազանց շատ գրականութիւն է։

Գիէսի հերոսները ներկայացնում են ոչ քէ աճեցեալի հրէականութիւնը, այլ հրէաներին, որոնք ապրել են 2000 տարի առաջ և որոնց մենք չենք ճանաչում ու չենք հասկանում, ոչ քէ մեզ անյայտ ապագայի հրէաներին, ոչ, դա ներկայ հրէականութիւնն է, ընթացիկ օրերի հրէականութիւնը, և նրանում են բռնկւում պօէզիայի այդ պայծառ փայլատակումները, նրանում են ընդհատւում մարդկային ամենաազնիւ մաքերը, լաւագոյն մտորումները և լաւագոյն ցանկութիւնները։

Ճանաչում ենք մենք իսկապէս հրէականութիւնը, ճանաչում ենք գաղափարական խմորումի այդ համաշխարհային մակարդը, որից Ռուսաստանում աւելի շատ կայ՝ քան քէ աշխարհիս որևէ մի ուրիշ տեղ...

Հրէականութիւնը մարդկային պատմութեան ընթացքում երկու անգամ արդէն կերպարանափոխել է աշխարհի հոգևոր դէմքը։ Նոր ժամանակների արշալոյսին մարդկութեան ամենաակտիւ ուժերի լծուելը նորից հրէայի—Մարկսի—վարդապետութիւնն է գործել...

Ինչ որ նոր, մեծ ու խռովայոյզ բան է վերածնւում, աճում։ Նա, այդ նորը, խմորւում է և սլաւօնական հոգու հին ակնկալութիւնների մէջ, նա բորբոքում է ևրոպական պրօլետարեայի հոգին, նա հասունանում է նաև այնտեղ, մութ և ծուռ ու մուռ փողոցներում, որտեղ մուրացիկ, թափառական, ճնշուած ու տառապեալ ժողովուրդը իր նախնիքների—մարգարէների հոգիներից դարբնում է նոր Մեսսիայի հոգին։

*Ջալալ Ցէր-Զրիզրեան։*

# ՏԱՐԱԶ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Մեծարժէք բարեկամ

Տիգրան Յակոբեան

Աղբիւր—Տարազը խմբագրութեան անունէն ի միջի այլոց յայտնել կը, որ անցեալ 1 15 թ. իր ձեռքը ունէր 1 500 ր. պարոցական ազատութիւնների համար բանանուագրելով Աղբիւրը ամբողջ կայսրութեան մէջ չուներ նոյնիսկ իւր 50 բանանուագ, այնուամենայնիւ չոյս տեսակի թղթ Աղբիւրի եւ թղթ Տարազի №№—րը ամբողջ տարին կրնէ։

Յաւատում եմ եւ իրեն հայ ասելուում եմ. բայց ինձ եւս ստիպեցրել եմ ուրիշներին, որոնիշտու այդ ուրիշները (հայերը) ատհամեմատ վատ են ձգտութեան տեսակէտից։

Ընդունելով իմ հետեւեալ առաջարկութիւնները

Ձեզ արդիւնք Աղբիւրի եւ Տարազի №№—րը այս 1916 թ. հետեւեալ 10 ընտանիքներին (երբ դեռ մի այլ չեն ստանում,) յայտնելով ամեն մէկին առանձին, որ ուղարկում եմ իմ կարգադրութեամբ։

Այս շաբաթ կուղարկեմ Բաղտասարի հայոց ուսումնարանների ցուցակը եւ կը խնդրեմ դոցա եւս ուղարկել միայն Աղբիւրը 1916 թ. իսկ ինչ վերաբերում է այդկցութեան ապ գոյուն այդ մասին դեռ խոսում չեմ արել, իր ժամանակին կը յայտնեմ։

Վերջինը ազգային պարտք եմ համարում յայտնել թ գիտութիւն Ձեզ իբրեւ ազգային յառգործիչ։

Ընդունելով իմ խորին յարգանքներս

**Քեր Սիմ. Ծթաբէկեան**

29 փետրուարի 1916 Ծ. Ղ.

---

*Մեր շատ յարգելի պ. Միքայել Ամարեկեանի (Թիֆլիսի Ցեղ. Վարչ. նախկին անդամ, և պաշտօնական քաղաքապետի (յանձ արարութիւնը սիրով կատարել է ժամանակին, սակայն բաժանորդագրողները (բացի 3 հոգուց) չեն վճարել իրենց բաժանորդագինը, (ամենքն էլ միլիոնատէրեր)։ Նակառ է, մենք արանց չէ յիշեցրինք իրանց պարտքը և ոչ իսկ տեղեկացրինք պ. Մ. Ամարեկեանին։ Այսօր էլ իրեւ նմուշ, թէ որքան արհամարհած է մայրենի գրականութիւնը, մամուլը, տպագրիչները նմանակից այս №ում։*

---

Ս.Ն.Տ. Խմբագիր

*Միանշամայն նախանձախնդիր լինելով Ձեր պատուական Աղբիւրի բարգաւաճման, իմ հայր աւագ ուսուցիչ Գր. Բալասանեանի գիւղատնտեսական եւ կոոպերատիվ գրքերը Ե-ին տալիս նպատակայարմար համարեցի նրանց կարգել Ձեզ պահեստում ի վաճառ։ Ներկայ տարի ես շրջելու եմ Ղարաբաղում, Ելիզաւետպոլում և Թիֆլիսում, որտեղ կը ներկայացնեմ գրքերը և կը ստանամ պատուէրներ։ Ուստի խնդրում եմ ինձ ուղարկել 20 օրինակ Աղբիւր օգտին նոյն տառատեսակով կազմակերպում եմ և մեծ օրերս տալու եմ աշակերտների համար մանկական նկարներ։*

*Միևնոյն յարգանքով*

Լուսիկ Բալասանեան

**1918 թ. 8 յունուար**

**Թիֆլիս։**

## ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Ներկայ 1918 թ. **Աղբիւրի և Տարազի** *մի-մի օրինակ ուղարկուում են հետեւեալ հասցէներին*

**Աղբիւր-Տարազի** *խմբագրութիւնից յիշատակ հանգուցեալ ա. Զարուհի Նազարեանի (Մ ցեակաց)։*

1. Թիֆ. Ձրդաշէնի հկ. -ծխ. ուսուցչարանին։
2. " կո ա անաց մեհեաստանի գրադարանին
3. " Վէրայի գիւղմանուտան եկեղց. միաբանութեան։
4. Թիֆ. Հայ Դրօղների Ընկերութեան։
5. Աշտարակ ս. Մեսրոպեան ուսումն. գրադարանին,
6. Շուշի՝ Ղազանցեցոց եկեղ. ծխ. ուսումնարանին։
7. Շուշի՝ " " " քահան. միաբանութեան։

**Յիշատակ Հմայակ Նազարեանի**

8. Շուշու բէալական ուսումն. գրադարանին,
9. " Կուսանաց եկեղ. ծխ. ուսումնարանին
10. Բաքւայ բէալական ուսումնարանին։

——

Գիմնազիստներ **Լեւոն Աբաբկէն Ասատուրեան Բէկ—Ռամկփեանցներից՝** *յիշատակ Զարուհի Նազարեանի Սեանայ վանքի գրադարանին։ Տիկին Նատալիա Կարապետի Աղեքսիկեանից՝ յիշատակ հանգուցեալ ամուսին Ներսէս Կարապետի Աղեքսիկեանի՝ Ղարաքաղի քեմ դպր. գրադարանին։ պ. Թէոդորոս Խաչատրեանից՝ Ամարասի վանքի գրադարանին պ. Աստուածատուր Բէկ—Ռամկփեանից յիշատակ Ալէքսանդր Ծատուրեանի Ջաքթալի հայոց ուսումն. Իմմիրեան գրադարանին։ Սմուսիներ ա. Թեւոսեանիկ և պ. Գասպար Տէր—Մարգարեանցներից՝ իրանց անուան Ղափան դպրոցին Աղբիւր 2 օր. և օր՝ Տարազ, պ՝ Աւետաւան Ղազանչեանից (մեր տրամադրութեան տակ) յիշատակ իր վաղաժամ ամուսին Թեւոսեանիկ Ղազանչեանի 20 օր. որ և ուղարկում է 10 օր՝ Հ. Ազգ. Խորհրդին և նրա որոշմամբ հայոց գիւղերին (յուշակը կը տպագրւի (11) Սարիղամիշի ծխ՝ ուսումն. 12) Թիֆ՝ Վանուհիների Միութեան, 13) Հայաստանի տպաս. հովուքեան Խորհրդի գլխաւոր գրասենեակին, 14. (Ղարաքաղի, 15) Ջալալ—օղլու, 16) Դիլիջանի 17) Ալէքսանդրապոլի, 18) Երեւանի որբանոցներին 19 Ղարաքլիսայի գողթակաց հիւանդանոցին, և 20 Վան Հայոց դպրոցներին։*

---

# ՇՐՋԱՀԱՅԵԱՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ

(Շարունակութիւն)

*Ներկայ 1918 թ. Աղիւր-Տարազի հետեւեալ բաժանորդները սրտաբուխ բաժանորդագին են ուղարկել փոխանակ 10 ր.՝*

*Տիկին Աննա Գէորգեան 15 ր., պ. Մնացականեան Խունունց 25 ր., պ. Մինաս Սուլթանեան 20 ր., ինժինէր պ. Գրիգոր Կիրակոսեան 40 ր., պ. Մհրան Անանեան 20 ր., տ. Վերգինէ Մաւուլեան 20 ր. պ. Յովհաննէս Ալեքսիպարեան 13 ր. Առևտր. տուն Եղր, Տէր-Գասպարեանց 25 ր, Ալէքսանդրօպոլից պ Սիմէօն Տէր-Գէորգեան 20 ր։*

## ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԻ ԼՈՒՄԱՆ

*Հրաժայողական, անյետաձգելի պարտք կայ իւրաքանչիւր հայի վրայ իր ընդհանուր եկամուտից մասն հանել Հ. Ազգային Խորհուրդին, որքան էլ սուղ լինին այդ եկամուտները։ Մենք որոշել ենք Ներկայ 1918 թ. Աղբիւր-Տարազի իւրաքանչիւր բաժանորդագինից 2ր. և միայն Աղբիւրի բաժանորդից 1 ր. նւիրաբերել Հ. Ազգային Խորհրդին ու բաժանորդների անունները տպագրել Աղբիւրում (միայն Աղբիւր) ստացողների և Տարազում (Աղբիւր-Տարազ ստացողների) եւ իբրեւ կանխավճար 500 ր. անցեալ դեկտ-ին ներկայացրել ենք Հ Ազգային Խորհրդին։ Առայժմ 1918 թ. համար բաժանորդագրուել են մինչեւ ներկայ փետրուարի 15-ը, հետեւեալները՝*

**Ս. ԷՋՄԻԱԾԻՆ**

*Նորին Վեհափառութիւն*

*Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. Սրբազնազոյն*

*Կաթուղիկոս ամենայն Հայոց։*

### Ախալցխայ

1. Քալաք Դրադ. Ընթերց։
2. " Ակումբ։

### Ալեքսանդրօպոլ

1. Գրադ. Ընթ. Գօստ. հետազր,
2. Սիմէօն Տէր-Գէորգեան։
3. Եղբ. Ալիխանակեաններ։
4. Խորէն Ղազարեանց։

### Ախալքալաք

1. Երգեց. ուսուց. Ումբրշատեան։
2. Գր. Ընդ. Ծառաջ։

### Ասխաբա

1. Վ. Տէր-Օհանեան։
2. Ցեղ. Դաշնակց. կուսակ.

### Արմաւիր

1. Գր. Ընթ. Սահակ Մեսրոպ։
2. Յ. Մ. Խաչատրեանց։

### Բագու

1. Մուշէղ Ադամեան։
2. Տէր Ներսէս ա. ք. Տէր-Կալաշեանց։
3. Լուսիկ Տէր-Յովհաննէսեանց։
4. Յարո, Թորոսեան։
5. Տ. Միքայէլեան։

### Բալախանի

1. Գր. Ընթ. Նաւաթարդիւնաբ։

### Բաթում

1. Մ. Խաչատրեանց Ընկերը.
2. Կարապետ Մեղաւորեան։

### Դամուռ-Դաւալու

1. Ա. Եղիազարեանց,

### Դերբենտ

1. Բէհբութ Իւզբաշեան։
2. Գուրգ. և Լևոն Մարտիրոսեան։

# ՏԱՐԱՋ

**Նամանգամ**

1 Փերդ. Անտառ. -արդ. Ընկ.
2 Մանաս Աղաբեկեան։

**Շուշի**

1 Ամարաս վանքի գր. Ընկ.
2 Ղարաբաղի Թեմ. դպր.

**Ն Նախիջևան**

1. Առաջ Ակսոմբ։

**Նախիջևան**

1. Շհիմանմուդ պիւզ Լուսաւորչեան Ընկ

**Եկատերինօդար**

1. Արփենիկ Մելիք-Գիւլնազարեան
2 Բժշ. Ն. Սերմաքէշեան։
3. Դր. Ընթ. Հ. Կուլտուր. **Միութ.**

**Զաքաթալի**

1. Աստուածասուր Բէկ-Յովսէփեան։
2. Գր. Ընթ. Կմմիրլեան։

**Իգդիր**

1. Արամ Ալթխանեան։

**Հափօղեխ**

1. Մկրտիչ Աստղիկեան։

**Կիսլաւօդսկ**

1. Գասպար Տէր-Մարգարեան։

**Ելիզվէտ**

1. Տ. Մոսեսեանց։

**Կովկասդ**

1. Մարգար Աւագեան։
2. Հայր Գաբրիէլեան։

**Կազվին**

1. Եկատերինէ Աբրիեան։
2. Աւետիս Շահրազեան։

**Ղափան**

1 Դաւթարեան Ուսուցիչ։

**Ղլզլը-Զախչախ**

1. Ս. Արշակունի։

**Ղամարլու**

1. Ջոհրաբ պիւզ «Անարոնեան» Գր. Ընթ,

**Ղարաուլբազար**

1. Հայ Եվա. Մ ի թ.

**Ղարս**

1. Հիպարխ Պուզուեան։
2. Անդրեասիկ Չաքարեան։
3. Աւետիս Աւետիսեան։
4. Արտաշ Տէր-Խաչատրեան։
5. Վահդ Քհոսաբարեան։
6. Յովհ Զալթիկեան։
7 Վանան Յակոբեան։
8. Յովհ Հարիսեան։

**Մոսկուա**

1, Գ Մ Տէր-Գէորգեան։

**Մերվ**

1. Եղբ. Տէր- Գէորգեան։

**Մեշեդիսեր**

1. Դաւիթ Փանեանց։

**Սևան**

1 Վանքի գր. Ը. թ.

**Սարիղամիշ**

1 Սահակ. Շապինեան։
2 Ծխ. ուսուցն.

**Վաշարշապատ**

1 Հայր Դաթեան։

**Տաշկենդ**

1 Գ. Արեյեանց,

**Տուապսէ**

1 Ադամ Բօղդօզանեան։

**Ռոստով**

1 Մովսէս Աւագեան։
2 Յովհ. Տէր-Մաչատրեան։

**Ռոմանովսկի**

1 Հ. Ծխ. ուսուցն. Կաւակազ։

**Թաւրիզ**

1 Տ Ներսէս սրբազան եպիսկոպոս Մելիք-Թանգեան

**Երևան**

1 Տիգրան Աբաղեան։
2 Տ. Վրթ. Մարդարեան։
3 Վարդանուշ Աֆրիկեան։
4 Հայրապետ Ազատեան։

**Թիֆլիս**

1 Ալէքսանդր Մելիք-Ազարեան։
2 Մարկոս Դօլուխանեան
3 Եփրեմ Ծատուրեան
4 Հ. Դիոնեսիոսի Վ. Դալաթոզեան
5 Եղբ. Գէորգեաններ։
6 Գրիգոր Ռոշկան։
7 Լևոն Կիլոյեան։
8 Եղբայրէք Տէր-Յակոբեան։
9 Իսահակ Հովհան։
10 Թէոդորոս Խաչատրեան։
11 Լևոն Խաչատրեան։
12 Զարեհիկ Գրիգորեան։
13 Աննա Գէորգեան։
14 Սաթենիկ Աղախանեան։
15 Անուշաւան Ղազանչեան։
16 Մատթէոսեան։
17 Գր. Ընթ. Գր, Ար ծրոյնի։
18 Վարսենիկ Ներսեսեան։
19 Սեդրակ Գալըրիէլեան։
20 Մնացական Խունունց։
21 Մինաս Սալմանեան։
22 Յովհաննէս Սպենդերեան
23 Ինժինէր Գր. Կիրակոսեան։
24 Ալէքսանդր Անանեան։
25 Վերգինէ Մուրադեան։
26 Վասիլ Աւանեան։
27 Բժշ. Միքայէլ Շահ-Գարոնեանց
28 Միքայէլ Կաֆեան։
29 Գէորգ Զամարեան։
30 Բժշ. Յովհ. Դասպարեան.
31 Առևտր. տուն Եղբ. Տէր-Գասպարեան.
32 Բարդ. Մաղաքեան
33 Մ, Ն. Մաղաքեան
34 Արտիստիկ Ընկ,
35 Մ. Տամպուչեան
36 Մանաս Ասլիկեան
37 Պետրոս Եկեկեան
38 Գրիգոր Թարախչեան
39 Լևոն և Բարկէն Բէկ-Աստուածատրեան
40 Հեղինէ Կրասիլնիկեան։
41 Հռիփսիմէ Թումայեան։
42 Սեդրակ Բարխայեան։

---

բացի այդ ևս 20 օրինակ պ. Անուշաւան Ղազանչեանի նուիրածներից ուղարկուեաւ։

43 Հ. Ապգային Խորհրդին
44 Հայաստանի Ապահով. Խորհ.
45 Վանուհիների Միութ. Գրադ։

Իսկ մնացեալ 17 օրինակներից 2-ը Սարիղամիշ և 15 ազգ. գնդիր ուսուցիչ. գրադարաններին։

Ուրիշն մինչև փետր. 15-ը թէ Թիֆլիսում և թէ գրսում նուէրների հետ միասին 153 վճարող բաժանորդ Արքիւր Տարագին, և 14 բաժանորդ միայն Ալբիւրից։


# Մշակ

Տարին 40 ր.

# ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ

Տարին 25 ր.

# ՀՈՐԻԶՈՆ

տարին 7 ր.

# КАВКАЗСКОЕ СЛОВО

Տարին 40 ր.



Տպարան Դպրոց. «ՀԻԱՏԱՊ» Типогр. Ратап, Голов. пр. 41